

„Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse: 42, 9, Cour  
RÉDACTION DU JOURNAL  
„Droschak”  
GENÈVE (Suisse)  
A. R. F. BUREAU  
LIBRARY

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՃՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ի

#### Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ Ի

(ԳՈՒՄԱՐԻԱԾ 1909 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ)

Ողջունելով Հին Բէթիմի տապալումը Օսմանեան Պետութեան մէջ, ուր նախկին կարգերու աւերակներուն վրայ կը ձեւաւորուի ազատութեան շէնքը, Դաշնակցութեան ընդհանուր ժողովը,— քաջալերած քսանամեայ յեղափոխական դրական աշխատանքով, զոր մտցուց վերածնութեան գործին մէջ, լցած խորունկ յարգանքով անզուգական զոհերու յիշատակին հանդէպ, որոնք դուրս եկած մեր ժողովրդի ցաւէն և ծոցէն, իրենց բողոքով, իրենց արիւնով, իրենց հերոսական մահով, Կուսակցական դրօշի տակ, նոր կեանքի խարխալը կուցին, — պարտք կը համարի յայտարարել ի գիտութիւն Թիւրքիոյ բոլոր ժողովուրդներուն և յատկապէս հայ ժողովուրդին.

Որ՝ Դաշնակցութիւնը իբրև կուռղ, յեղափոխական կուսակցութիւն, վար կը դնէ դաւադրական այն միջոցները, որոնցով կը պայքարէր հին բռնակալ Բէթիմին դէմ, և իբրև կողմնակից սահմանադրական Բէթիմի, որ մերձաւոր և լաւագոյն հանգրւանն է իր ծրագրին և սկզբունքներուն մշակման ու գործադրութեան համար, ի հարկին հանդէս կուգայ մարտական-ուղղակի իր ամբողջ ուժով՝ կռիւ մղելու Բէթիմի դէմ, երբ ան սպառնայ սահմանադրական կարգերուն և փորձէ վերահաստատել այն վիճակը՝ որ այս երկրի անկման և յետամնացութեան պատճառն եղաւ:

Որ՝ Դաշնակցութիւնը հաւատարիմ իր սկզբունքին և գործելակերպին, պիտի շարունակէ նոյն թափով և աւելի լայն ծաւալով համագործակցել թիւրք երիտասարդ կուսակցութեան և մտաւորականութեան հետ՝ ի պաշտպանութիւն սահմանադրութեան և համախմբել այդ գործակցութեան շուրջը այն բոլոր դիմադիր տարրերը, հայ և օտար, որոնք գիտակցութիւն և նպատակ ունին պաշտպանելու նոր կարգերը, ինչպէս նաև ժողովուրդի կեղծբաժ զասին շահերը, և իր այդ վերաշինող աշխատանքին մէջ կուսակցութիւնը ջանք չպիտի խնայէ վերացնելու համար միջազգային և ազգային այն բարդութիւնները, որոնք կրնան դժարացնել իրաւակարգի հիմնաւորումը և ազգերու փոխադարձ և անկեղծ համերաշխութիւնը:

Որ՝ Դաշնակցութիւնը նախանձանդիր հայ ժողովուրդի ներդաշնակ և անարգել զարգացման, պիտի պաշտպանէ մեր ազգային-կուլտուրական քաղաքակրթող բոլոր հիմնարկութիւնները, պիտի հովանաւորէ ժողովրդական բոլոր իրաւունքները, միշտ յարգելով ուրիշ ժողովուրդներու նոյնքան սրբազան իրաւունքները:

Որ՝ Դաշնակցութիւնը պիտի շարունակէ, պաշտպանելով հանդերձ սահմանադրական կարգերը, խիստ կռիւ և պայքար մղել կառավարութեան դէմ, այն պարագային, երբ անիկայ դաւաճանելով իր պարտաւորութեան, թող տայ շեղումներ՝ սահմանադրական շաղէն, ի վնաս երկրի բովանդակ շահերուն և պետութիւնը կազմող բոլոր ազգերու հաւասարութեան և հետեւաբար՝ անոնց մերձեցման:

Որ՝ Դաշնակցութիւնը՝ վճռականապէս ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տքնի վերակազմել Երկրի քաղաքական և տնտեսական կարգերը, Օսմանեան Պետութեան ամբողջութեան մէջ, հիմնած բոլոր շրջաններու տեղական լայն ինքնավարութեան վրայ և ամրապնդած բոլոր տարրերու դաշնակցական կապերով:

Որ՝ Դաշնակցութիւնը, անվերապահ կողմնակից արդարութեան և արդարադատութեան, պիտի մնայ պահանջողի դերին մէջ Ատանայական քաղաքական եղեռնին դիմաց, որ է և պիտի ճանչցուի համապատասխան աղէտ և

և անարգանք, մինչև որ լուսացւի տյգ անարգանքը՝ արգարութեան գեր-յաղթանակով, զոհերու իրաւունքներուն ապահովումովը ու պատասխանատուներուն խիստ պատիժովը—միակ միջոցը ամբողջ պետութեան մէջ ապահովութիւնը և խախտած կարգը հիմնաւորելու:

Ամրապնդումն Սահմանադրութեան, և կռիւ ընդդէմ իր Էմբոսիոնի դէմ: Համերաշխութիւն բոլոր ազգերու՝ էական հաւասարութեան հողի վրայ: Ստեղծագործող աշխատանք՝ բոլոր ասպարէզներուն մէջ: Մաքրագործումն վարչական կազմի: Յամառ, յարատե ջանքեր՝ հարթելու համար այն փշոտ ճամբան՝ որ պիտի տանի դէպի ուսմակապետութեան հաստատումը՝ միապետութեան փոխարէն, և աշխատանքի գերիշխանութիւնը՝ գրամի գերիշխանութեան փոխարէն:

Եւ այդ շաւղին վրայ, կուսակցութիւնը՝ իր քսանամեայ կեանքովը փորձառու, պիտի մնայ անշեղ և անյողդողդ՝ հալածանքին դէմ, ըլլայ այն ընդդէմներ կառավարութեան թէ՛ ժողովրդական խաւար ու պղտոր տարրերուն կողմէն,—միշտ հաւատարիմ իր ծրագրին, իր սկզբունքներուն, իր գործելակերպին,—յնեւ շիտակ և անձնէր շարքերուն վրայ:

Կուսակցութեան Իրաւասու Մարմիններուն թողնելով մեր որոշումներու հրատարակութիւնը ի գիտութիւն ամբողջ կազմակերպութեան, ընդհանուր ժողովը կոչում կ'ընէ Դաշնակցական բոլոր Մարմիններուն և ընկերներուն, ճշտօրէն հետեւիլ կազմակերպութեան Բարձրագոյն Ատենանի գծած շաւղին, խորապէս համողած որ կարմիր ու մահաբոյր անցեալէն յետոյ, կարող պիտի ըլլանք պատրաստել վաղան յաղթանակը—Ծ ո ղ ո վ ը ր դ ա պ ե ա ու թ ի լ ն ը, հիմնած Ա շ խ ա տ ա ն ք ի Գ ա Ղ ա փ ա Ր ի ն վրայ:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԵՐԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

## ԿԱՑՈՒԹԻՒՆՆԸ ԵՒ ՄԵՐ ՊԵՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ III

Աշխատաւորական հատւածը — որ ունի արդէն իր հայ ու բուլգար ներկայացուցիչները նոյնիսկ օսմանեան պարլամենտում—կարող է դառնալ շուտով՝ թէ պարլամենտի և թէ երկրի մէջ՝ ամենաազդեցիկ, դիմադրական թւը (*parti d'opposition*), քանի որ քրիստոնեայ հատւածների լաւագոյն, գաղափարական տարրերը — որքան էլ նրանք լինին սակաւաթիւ — սոցորւած են աշխատաւորական իրէականերով, քանի որ միւս կողմից չափազանց խեղճ է բուրժուա աւանդականութիւնը (*démocratie bourgeoise*)՝ այդ քրիստոնեայ ներկայացուցչութեան մէջ—ծոյլ, իներա, առանց քաղաքացիական կորովի ու աւանդութիւնների և առանց մտաւոր ու գաղափարական պաշարի...

Այն ինչ՝ մահմեդական աշխարհում և պարլամենտի իսլամ մեծամասնութեան մէջ այդ բուրժուական ուսմակարութիւնը, տարաբախտաբար, գրեթէ բոլորովին բացակայում է: Եւ դա մի տխուր, ճակատադրական երևոյթ է, որ խաղացել է իր բացասական դերն անցեալում, խաղում է այժմ, պիտի խաղայ և ապագայում, այն դժբախտ ու դանդաղ էւօլիւցիայի մէջ, որ պիտի կրէ սահմանադրութեան ճակատագիրը: Եթէ անցեալում բարենորոգչական ծրագիրները վիժել են հաճկաստանում — դրա խոշորագոյն պատճառներից

մէկը հէնց այն է, որ չի եղել բուրժուական, լիբերալ, ազատամիտ դասակարգը, որը գրեթէ բոլոր երկրներում հղօր պատւար է հանդիսացել քաղաքական յեղափոխութիւնների ու սահմանադրական ընթացի և որ կարողացել է շատ թէ քիչ ընդարձակ ուսմակարական բնոյթ հաղորդել այդ սահմանադրութեանը, գրաւել այդպիսով ժողովրդական լայն զանգւածները, ի նպաստ նոր իրաւակարգի: Բիւրօկրատիան (պաշտօնէութիւնը) յօրինել է ընթացիների ծրագիրները, բիւրօկրատիան էլ ջնջել է նրանց փաստային գոյութիւնը... Ժողովրդի, մահմեդականութեան ճնշող մեծամասնութիւնը մնացել է միշտ լուռ, կրաւորական, նոյնիսկ թշնամական դիրքում հանդէպ այդ բոլոր ընթացիների, նախ որովհետեւ այդ վերջինները նեղ-քաղաքական բնոյթ ունենալով, նոյնիսկ մակերեսօրէն չէին շօշափում ժողովրդային աշխատաւոր մեծամասնութեան շահերը, և երկրորդ՝ որովհետեւ այդօրինակ ընթացիային փորձերի մէջ ագէտ, նախապաշարւած ու ֆանատիկոսացած ընդհանրութիւնը տեսնում էր միշտ «գեաւուրի ձեռքը»... իսկ այդ ձեռքը նրա համար մի մահաբեր, սրբապղծող, դժոխային բան էր, որ գալիս էր տակնուվրայ անելու հաւատացեալների բովանդակ աշխարհահայեացքը, բոլոր հինաւուրց պաշտամունքները...

Բուրժուազիա չը կայ և այժմ մահմեդական աշխարհի մէջ, նրա դերը ոչինչ էր երէկայ վերիվայրումների ընթացքում: Չը կայ մանաւանդ ուսմական բուրժուական:

Աշխատաւորական կուսակցութեան գերը այդ պատ-

ճառով խիստ բարդանում, դժարանում է: Նա պէտք է ստանձնէ միաժամանակ և մասամբ այդ բուրժուա-նավարութեան պաշտօնը: Նա գրեթէ մենակ է մնում բուն ժողովրդական ընթացիների իր ծրագրով, մենակ հանդէպ մի հզօր ու կուռ, մեքենական ու երա-մական մեծամասնութեան: Գրեթէ մեն-մենակ նա պիտի ձգտէ խորակելու այդ վերջինի: անտարբերութիւնը դէպի ժ ո ղ ո վ ը ղ ի ու ա շ ի ս տ ա ն ք ի ամենա-նւիրական դատը, գրեթէ մեն-մենակ պիտի պաշտպանէ անխտիր բոլոր—քրիստոնեայ ու մահմեդական—աշխա-տաւոր զանգւածների շահերը:

Քարացուժը, սակայն, յաւիտենական չէ: Անշուշտ, իրերի զօրութեամբ կըսկսուի վաղ. թէ ուշ բաղձալի զ ա ն ա զ ա ն ա լ ո Ր Ո Ւ Մ Ը նաև տաճկական կուռ բլօկի մէջ—նա արդէն իսկ սկսած է— առաջ կը գան տարբեր հոսանքներ ու հատուածներ: Առաջ կը գայ վաղ թէ ուշ բուն ահարեան, ազատամիտ կուսակցութեան հետ իսկական ժ ո ղ ո վ ը ղ ի ու կ ու ս ա կ ց ու թ ի լ ն ը, որ անկեղծօրէն, համոզուով, աշխարհայեացքով և կենդանի, ռէալ գործով կը նւիրուի ազգաբնա-կութեան աշխատաւոր մեծամասնութեան շահերին: Սակայն, դրա համար ժամանակ է պէտք: Առայժմ օսմանեան ճակատագրի ղեկավարները, ըստ երևոյթին, տրամադիր չեն հանդուրժելու, մասնաւորապէս իրենց կրօնակիցների աշխարհում, աշխատաւորական, սօցիա-լիստական գաղափարների մուտքը և ահա միակ մահ-մեղականը, որ ազատութեան օրերից ի վեր հրատարա-կում էր Զմիւռնիայում թիւրք ու յոյն լեզուներով սինդիկալիստական «Երդաթ» թերթը, նւիրուած խեղճ ու կրակ աշխատաւորների շահերին, այսօր ստիպած է— իր մամուլի բուն խափանումից յետոյ—փախչել իր «կրթած, եւրոպականացած», հայրենակիցների սպառ-նալիքի տակ և ապաստան փնտրել Եւրոպայում... Երի-տասարդ տաճիկների սահմանադրութիւնը սկզբից իսկ դրսևորում է հակաժողովրդական իր գոյնը. նա ու-զում է լինել ըստ ամենայնի «արտօնեալների սահ-մանադրութիւն»...

Առայժմ, ուրեմն, բուն «ժողովրդական ներկայա-ցուցչի» պատուաւոր տիտղոսը օսմանեան պարլամենտի մէջ կը պատկանէ միայն մի բուն գաղափարական կտրիճների, գլխաւորապէս քրիստոնեայ տարրերից: Նրանց ուժ ու եռանդ կը տայ նոր սկսած ալէկոնումն ու շարժումը օսմանեան աշխատանքի ասպարէ-ղում և նա իր կողմից կը տայ պատշաճ արձագանքը այդ շարժումին, ինչպէս որ եղաւ ժօտիկ անցեալում, սին-դիկատների ու գործադուլային օրէնքների վիճաբանու-թեան միջոցին: Նա կը ձգտէ—մտնելով ի հարկին հա-մաձայնութեան, իրաւախօհութեան մէջ գոյութիւն ունեցող ուրիշ փոքրիկ, շատ թէ քիչ ռավարար, տար-րերի հետ—իրագործելու այն մի շարք հրատապ, ան-

յետաձգելի բարենորոգումները \*), որոնք կարող են մի յայտնի չափով բարձրացնել երկրի խոշոր, տիրապետող ընդհանրութեան, աշխատաւոր ու հարստահարած մասսաների նիւթական բարօրութիւնը:

Այդտեղ է երկրի փրկութեան միակ խարխուլը. առանց դրան չը կայ յարատե ազատութիւն, չը կայ յարատե սահմանադրութիւն: Ոչ մի ընթացք, սահմա-նադրական ոչ մի ընթիմ չի կարող տեղողական բուս-րարութիւն տալ հայ ազգաբնակչութեանը, եթէ նա չը շօշափէ այդ վերջինի 90 տոկոսը կազմող գիւղացիու-թեան ու արհեստաւորութեան խորունկ շահերը \*\*):

\*) Տես Հ. Յ. Գաւանդուքեան հրատարակած պլասթօրմի նւագ-գոյն պահանջները գիւղացիական ու այլ բժշկութեան վերաբերմամբ:

\*\*) Հայ մի կարգ սիրացու-հրապարակասուներին եւս, բւս երեւոյ-քին խիստ անհանոյ է, որ պարլամենտի եւ երկրի մէջ սկսում է շեւ-տել—բէկուդ. եւ շւս բոյլ չափերով—սօցիալիստական կամ աշխատաւորական սեպուլտուր, եւ նրան «արդէն դոկտրինայի անէմներ են քափում «դաւանան», «ազգայնորան» արդիւնի վրայ, նշակում են նրանց հայրենի կրօն սրբապօղոցներ, մայրենի եկեղեցի-կործանողներ... Մեզ չի զարմացնում այդ պոստ հոսանքը, որի նախ-ընթացք ենթեկ ենք կովկասում: Այնտեղ եւս, հէնց որ հայ ժողովրդա-կան կազմակերպութիւնը, 15 տարւայ ազգասպրական իր արխիւոս նիզերից յետոյ, սկսեց գրաւել միմ միսի ետեւից քաղաքական գործունէութեան ասպարէզները, լաւեցին ազգային բոլոր ցեղերի բա-նակից անաբեմաներն ու հալածանքի վայրերի աղաղակը. բոլոր տար-րերը, անգամ երբեմնի հակոսեանները, միացան նրա դէմ. «ազգային լիբերալներ», բուրժուա-աղաներ, կղերականներ, օրմենականներ, իրենց արտօնեալ սիրապետութեան վախճանն զգալով, *cause com-mune* արին, որպէսզի դուս մղեն հրապարակից նոր, շինարար գործունէութեան դրօսակալիր մարմինը,—եւ արիւնքի ընթացում լաւեցին մի անորակի մամուլի էջերից դժօսների, ուղղակի եւ ան-ուղղակի մասնութիւնների հետ՝ ցած, անարգ ինսիմուալիան—բէ Գա-ւանդուքեանը ուզում է քանդել եկեղեցի, ազգ ու օճախ, քէ նա նոյն նպասակով էլ գնացել էր 1906-ին, Էջմիածնի Կենսօճական ժողովը... Այսօր բնակիցայի հովանիի սակ հակայեղափոխական արդիւնի այլ բուսական կօզլուրեալք սօնում է իր յարթակները. գիմիզը, գրչի ու մեքի գոնկուքիւնը կասարում է իր սպօթօղը թիփխից միջեւ էջմիածին, վարակելով եւ նորնիսիր կաթողիկոսին, որը սկզբից ի վեր, փոքրիկ, հնազանդ ու դողախար չիմօվիկի պէս, ամեն տարի, տեղի-անտեղի հոլովում է իր ցարահպասակ, խնամահպին զգացում-ներն ու պատգամները: Բնորու ու նշանակելի է, որ այլ գաւառայր, միշտ աւելի սպականող մրտուրսում միաժամանակ խիստ բազալե-րւած է արեւաւոր... հանգուցեալ կաթողիկոսի դէմ, որի պարմանն ու մեծութիւնը կազմում է հէնց այն՝ որ նա բոլոր ժամանակների հայ կրօնաւորներից լինելով հանդերձ ամենափոքրահասակն ու քաղաքա-ւորը, եղել է եւ ամենաաշխատասէր ու ամենապոստը, հանդիսացել է նախ ժողովրդի սպասաւոր եւ ապա միայն կղերի ու կրօնի:

Պատմութիւնը վերսկսում է—եւ անա նոյն երեւոյթը, նոյն ազ-գային-հակայեղափոխական *volte-face*-ը Կ. Պօլտում: Հայ ազ-գային սիրացուների հանինն է, որ արեւում է ազգասութեան հողմի հարւածների սակ... Նայեցէ՛ այդ բանակուրին, այդ իրարացումին, այդ տեղային, ամբաստանողական անսպարանքին... Երէկայ բոլոր խաթիները, հակայեղափոխութեան ու «չէղոսութեան» բոլոր բազարի սպայեները միացել են մի սրբազան ու արտօնը դաւանակներն ու մէջ եւ հրապարակ են նետել իրենց կովկասեան համազգային սրբա-մասնակոյրը. «ազգն ու եկեղեցին վսանգի մէջ են,—կուր Զ. Յ. Գա-ւանդուքեան դէմ... Կրկնում ենք, մեզ բնաւ չի զարմացնում այդ վայնասունը: Կը զարմանայինք, եթէ չը լինէր այն: Գաւանդուքեան վրայ գլխապատասաւ արեւաւոր այդ պարտները իրենց անբողք նկարա-գրով, իրենց բովանդակ էութեամբ հակառակ են ոչ միայն սօցիա-լիզմի ու աշխատաւորական իդէալների, այլ եւ պարզ դեմոկրատիզմի, ժողովրդապետական սկզբունքների, ռավարարութեան: Նրանք կու-ղեին, որ հայ ժողովուրդը, հայ երիտասարդութիւնը յանիսնօրէն փարած մնային պատրիարքների ու կաթողիկոսների, կրօնական ու աշխատիկ սիրացուների փեւերին, բոլոր հիւսուար դաւանանքներին ու երմարին...

Երբ բուն քաղաքական, ռամկավարական ընթացիկների հետ կիրառործելիս և մի շարք հրատապ սնտեսական բարենորոգումները, երբ արդիւնաբերական վայրերում աստիճանաբար կը բարձրելի գործաւոր պրօլետարիատի ստրկական կացութիւնը—աշխատանքի ժամանակի կրճատումով, վարձագնի աւելացումով, բանուրական ապահովութեան օրէնքներով և այլն—երբ մանաւանդ դաշտերում, աշխատանքի լայնարձակ հօրիզօններում, կը մեղմանայ բազմամիլիօն պարիսնների վրայ ծանրացած լուծը, երբ օսմանեան կայսրութեան մէջ համատարած խոշոր հողային սեփականութիւնների մի զգալի մասը կը գրավելի յօգուտ մշակող ու տնտեսող գիւղացիութեան, երբ կը սահմանելի արդար ու բանաւոր հարկաւորութեան սխտեմ, երբ այդպիսով երկրի բովանդակ աշխատաւոր ընդհանրութիւնը կը տեսնէ, որ նոր ըէփմի գլխաւոր մտահոգութիւնն ուղղած է դէպի նրա ցաւոտ ճակատագիրը,—այն ժամանակ ինքնին արդէն կը վերանայ ըէ ա կ ց ի ա յ ի, յետագիմական երկիւղների մշտնջենաւոր կօշմարը, որի տակ ապրում է ներկայումս ազատագրւած Տաճկաստանը, այն ժամանակ ինքնին կ'աճի ժողովրդական վստահութիւնը դէպի սահմանադրութեան ըէփմը, ժողովուրդը իր ամբողջ էութեամբ կը փարի նոր իրաւակարգին և իր կուռ բազուկներով կը չէզոքացնէ թէ համիդեանների յետագիմական սագրանքները և թէ այն բոլոր խուճուճ ու բիրտ ախորժակները, որոնք մշտական վտանգ են սպառնում բրիտանացիների, մասնաւորապէս հայերի, գոյութեանն ու առաջագիմութեանը... Այն ժամանակ և ազատ, անարգել թուիչք կըստանայ միջազգայն ու թեան հոսանքը ամբողջ երկրի մէջ:

Հրապուրիչ հեռապատկեր... Եւ այնքան աւելի շուտ կը հասնի այդ վիճակը, որքան աւելի շուտ կը կատարելի վերը յիշատակած զանազանաւորումը մահադական—տաճիկ, բիւրդ, արաբ, այբան—միապաղաղ օրգանիզմի մէջ, որքան աւելի շուտ գլուխ կը գայ, թէ պարլամենտում, թէ դքսում, սերտ, համերաշխ գործակցութիւնը նախ բրիտանացի, դիմագրական տարրերի միջև, ի դէմս նրանց աշխատաւորական ու ռամկավարական հատուածների, որքան աւելի շուտ, վերջապէս, կը զարգանայ—իր խորութեամբ ու տարածութեամբ—մահադական մտաւորականութիւնը...

Աւելացնենք — գաւառական, ժողովրդական մտաւորականութիւնը:

Ահա մի տարր ևս, որ իբրև դասակարգ, գրեթէ բոլորովին բացակայում է մահադական համայնքների մէջ, ինչպէս որ բացակայում է ռամկավարութիւնն ու բուրժուազիան: Դրանք բոլորն էլ յարակից, շարկապւած երևոյթներ են, կամ աւելի շուտ չեղանջոյթներ, որ պայմանաւորում են նոյն խակ ու բիրտ իրականութեամբ: Տաճկական այն մտաւորականութիւնը, որ այսօր

գլուխ է կանգնած սահմանադրական նոր կարգերի, իր այլամբրժ նացիօնալիզմով, համիսլամութեան խմորով շաղխւած իր ազգայնական դաւանանքով (մի կողմն ենք թողնում յարգելի բացառութիւնները), տարաբախտաբար, հեռու է — թէ իր ծագմամբ և թէ կրթութեամբ—բուն ժողովրդական խաւերից, նրանց շահերից ու տենչանքներից:

Պէտք է ստեղծել գաւառական մտաւորականութիւն: Այդ բացը մեզ մօտ ևս կայ, բայց դրացիների մօտ նա ուղղակի ճակատագրական է: (Երբ խօսքը գլխաւորապէս թիւրքաց հայաստանի մասին է): Եւ այդ չարիքի վրայ ստիպւած ենք անդրադառնալ ամեն անգամ, երբ որոճում ենք գործունէութեան մեր ծրագիրները: Քանի դեռ կայ նա, այդ ահուկի բացը, թուում է թէ մենք դատապարտւած ենք թիւրքահայաստանում—միջազգայնութեան, համերաշխութեան ու քաղաքակրթութեան մեր պրօպագանդի մէջ—սիզիֆեան ամուլ ու դժնդակ աշխատանքի: Քանի դեռ կայ նա, մեր շարժումները ազատ չեն, մեր թուերը կաշկանդւած, մեր ամենամանկեղծ կոչ ու յորդորները դրացի ժողովուրդներին, նրանց ճնշւած, հարստահարուած տարրերին՝ պիտի մնան թերևս միշտ անապատի մէջ բառբառող ձայներ: Կրկնում ենք՝ մենք գոց, ուրոյն միջավայր չենք: Բաւական չէ այդ չենք էլ կազմում թուի ու ժը, մի այնպիսի պատկառելի ուժ—որպիսին կազմում են օրինակ, սլավոնները Մակեդոնիայում—որ տար մեզ հնարաւորութիւն՝ գնալու ուղղադիմ առաջագիմութեամբ, առանց վարանելու և առանց երկիւղ կրելու հասարակական յարաբերութիւնների «հաւասարակշուութեան» խախտումներից: Սլավ սօցիալիստները Մակեդոնիայում այսօր արդէն պատերազմ են յայտարարել իրենց ժողովուրդներին ստրկացնող մահադական խոշոր հողատէրերի դէմ և նրանք ըստ ու երկիւղ չունին խախտելու ազգամիջեան յարաբերութիւնների վերոյիշեալ հաւասարակշուութիւնը:

Այլ բան է մեր իրականութեան մէջ... Հիւսել ենք հօր ու միանգամայն այլասեռ (hétérogènes) տարրերի հետ և թուում է թէ մեր սօցիալական ու քաղաքակրթական առաջագիմութիւնը կարող է աղողութեամբ կատարել մէկ անհրաժեշտ պայմանով միայն՝ որ մենք բարձր ենք մեր ետեւից աւելի յետամնաց հարեաններին... Որովհետև նրանց յետամնացութիւնը մշտնջենական վտանգ է մեր առաջագիմութեան ու քաղաքակրթութեան համար, որովհետև նա մշտապէս յղի է կուլտուրասպան դաւերով, ուղղւած... նախ և առաջ հայութեան դէմ:

Երբ գաւառական մտաւոր ուժերի վրայ է ընկնում դժբախտ պարտականութիւնը՝ աշխատել, անգուլ պրօպագանդով, զինւորագրելու ռամկավարական գաղափարների համար մուսուլման ինտելիգենցիայի ցիր ու

ցան բեկորները: Ասպուրականում անցեալի մէջ կատարած փորձերը որոշ գրաւական են, որ այդ աշխատանքն ապարդիւն չի անցնի: Պէտք է ստեղծել միացնող կոմունըրը, կեանքի կոչել շատ թէ քիչ մտահաս երիտասարդութիւնը և նրա միջոցով արծարծել մասնաճանաչական աշխարհում միջազգայնութեան մեր գաղափարները, մեր իդէալը բոլոր ճնշածների ու չարքստահարածների դատի նկատմամբ, հասկացնել ժողովուրդներին, որ նրանց շահը իրօք մէկ է, որ նրանք բոլորն էլ կապած են ազնիւ ու արգասաւոր աշխատանքի աւետարանով, որ կղեր ու այլ դասակարգեր — իրենց աւելորդ գոյութիւնն ու տիրապետութիւնը յարատեւելու համար — իսկզբանէ բթացրել են նրանց, ներշնչել են մարդասպան դոզմաներ, հաւատամքներ, որոնց անուսով ժողովուրդները դարեր շարունակ ծւատել են իրար...

Որքան ժամանակ ու աշխատանք է պէտք, մինչև կը ստեղծւի այդ կամուրջ-մտաւորականութիւնը, մինչև կը փոթորկւի հին, չարաշուք պաշտամունքների նիւթած ճահիճը, կը մեղմանայ ազգամիջեան անվստահութիւնը, նախապաշարունակները և թիւրք ու բիւրդ գիւղացիական զանգւածները, շատ թէ քիչ հասունութեան գալով, կը ճանաչեն, վերջապէս, իրենց իսկական թշնամիներին ու բարեկամներին...

Առայժմ ազգային մըցումն է տիրապետող իրողութիւնը մեր երկրում — և դժար է ասել, թէ քաղաքական, ղրոճոճական՝ յեղափոխութիւնը կատարելուց յետո՛յ մենք այժմ մտնում ենք արդէն աշխատաւորական, դասակարգային սուր պայքարների մի շրջան: Դժար է ասել, թէ կողմ հէնց այն պատճառով որ «կապիտալիստական» աւատական ուժը՝ խոշոր հողային սեփականատիրութիւնը, գտնելով գրեթէ բացառապէս մասնաճանաչ տարրերի ձեռքում, մեր ժողովուրդը շատ տեղերում ենթարկւած լինելով այդ օտար ու նահապետական «կապիտալիզմի» լծին, — մեր գաղափարական երիտասարդութիւնը անկարող է առայժմ կռիւ յայտարարել այդ լծի դէմ, առանց յարուցանելու վտանգաւոր թիւրիմացութիւններ... Դասակարգային կռիւը կարող է հեշտութեամբ վերածուիլ ազգային կռիւ... Յիշենք, որ Վովկասում, 1905—907-ի թուրքական ծանօթ արշաւանքի մէջ հայերի դէմ՝ մի յայտնի դեր է ունեցել — թէ կողմ և գուցէ «պատրւակի» դեր — թուրք աւատական բեգերի, հողատէրերի դէմ շղթայազերծւած ագրարային շարժումը, որ մի մասնիկն էր համառուսական մեծ շարժման և որի ղեկավարներն էին ոչ-մասնաճանաչ տարրեր՝ վրացիներ, ռուսներ և հայեր: Բեգ-աւատականները դիւրութեամբ համոզում էին իրենց տիրական ազգեցութեանը ենթակայ մարդկային նախիրներին, որ «գեպուրի» սագրանքները ուղղւած են ոչ թէ մի բուռն ձրիակեր գիշատիչներին այլ ամբողջ ցեղի ու կրօնի դէմ...

Վովկասեան դասերը պէտք է ունենանք մեր աչքի առաջ և գլխապատառ չը յափշտակենք գաղափարի հմայքով ու թովչութեամբ: Որքան աւելի «գաղափարական» է մի միտք, այնքան աւելի դժւարին է նրա մարմնացումը, «նիւթականացումը»: Որքան հմայիչ ու վեհանձն է աշխատաւորական միջազգայնութեան թէօրիան, նոյնքան փշոտ է նրա իրականացման ճանապարհը:

Վովկասեան փորձերը պէտք է ունենանք մեր աչքի առջև՝ նաև մեր «ներքին», աշխատաւորական պայքարների միջոցին: Վովկասում այդ հողի վրայ կարճ ժամանակում մեր և ուրիշ կազմակերպութիւնները կարողացան, իրաւ է, պատկառելի նաճուճներ անել աշխատաւոր ընդհանրութեան համար թէ գիւղերում, թէ քաղաքներում: Բայց եղան նաև ցաւալի վրիպումներ — արդիւնք թերուս յափշտակութիւնների և դասակարգային պայքարի նեղ ու շաբլօն հասկացողութեան:

Դասակարգային մըցակցութիւնը, թոյլերի ու կեղեքածների պատերազմը հզօրների ու կեղեքիչների դէմ, անտարակոյս, անհրաժեշտ է և բանաւոր, սրբագործւած թէ գիտութեան և թէ խզի պատուիրաններով: Նա արդէն իսկ ճակատագրական մի իրողութիւն է գրեթէ բոլոր հասարակութիւնների մէջ, անկախ մարդկանց կամեցողութիւնից, ծնունդ դարաւոր անտեսական ազգակների — արդիւնաբերական միջոցների զարգացման, անհատական սեփականութեան — մի տեղ աւելի շեշտւած, մի այլ տեղ նւառ, ճակատագրական և միանգամայն առաջադիմական իրողութիւն, քանի որ նա անդադար խթում, մղում է մարդկային հասարակութիւնները դէպի զարգացման բարձր հանգրւաններ, քանի որ նա միակ միջոցն է բարձրացնելու թշուա, իրաւազուրկ, յաւիտենօրէն լքւած աշխատաւոր դասակարգերի բարօրութիւնը, միակ ճանապարհը դէպի մարդկանց հաւասարութեան և ազգերի համերաշխութեան գալոց աշխարհը...

Դասակարգերի հակամարտութիւնն եղել է և կայ նաև մեր կեանքում, թէև նա տակաւին չէ վերածւած գործօն կոււի, թէև իրենք դասակարգերը ևս միանգամայն չեն զուած, որոշւած իրենց ուրոյն կերպարանքով: Այդ զտումը կը կատարուի վաղ թէ ուշ անտեսական զարգացման պրօցէսի մէջ: Վաղ թէ ուշ — թուում է ոչ հեռու ապագայում — եւրոպական ու տեղական դրամագլուխների կիրառումով՝ կապիտալիզմը քաղաքակրթութեան այդ հսկայ ջահակիրը, մուտք կը գործէ նաև մեր երկրի խորքերը իր անխուսափելի չարիքներով ու բարիքներով, կը յեղաշրջէ նահապետական կացութիւնը, կը ձուլէ առանձնայատուկ դասակարգերը և կը լարէ ու կը հանէ նրանց՝ մին միւսի դէմ:

Հակամարտութիւնը այժմ ևս, այո՛, անժխտելի իրողութիւն և մենք չենք սպասի կապիտալիզմի ներմու-

ծուսին, որպէսզի մեր պաշտպանութեան տակ առնենք՝ ընդդէմ՝ աղայական, վաշխառուական ու այլ մակաբոյժներին, հաշ ազգութեան ահագին մեծամասնութիւնը կազմող՝ ճընշուած աշխատաւոր դասակարգերը՝ Նրանց շահերի անուսով ենք հրապարակ եկել 20 տարի սրանից առաջ և նրանց արդար տենչանքներն են, որ այսուհետև ևս պիտի զարդարեն մեր գրօշակը, պիտի հնչեն մեր բերաններէ՝ թէ նորածին պարլամենտում, թէ ազգային երեսփոխանական ժողովում, թէ գաւառական այլևայլ հաստատութիւնների մէջ և թէ մամուլի օրգաններում ու հրապարակական ժողովներում...

Դասակարգերի հակամարտութիւնը իրողութիւն է, բայց... ի շարս անտեսական ազդակների, գործօն մտաւորական ուժերից ևս կախած է՝ տալ նրան, այդ հակամարտութեանը՝ թող կամ ուժգին սլացք, հաղորդել նրան սուր, ծայրայեղ ու մոլեգնոտ բնավորութիւն: Այստեղ է ահա, որ ծագում են անխուսափելի բեզբերիներ, վերապահումներ, որոնք պայմանաւորում են մեր բոլոր նախորդ պատճառաբանութիւններով: Այստեղ մենք մտաբերում ենք մի այլ ծանրակշիռ իրողութիւն, որ ամեն տեղ և մանաւանդ մեր արդի պայմանների մէջ դառնում է մի պոստուլատ, հրամայական մի պահանջ: Այդ միւս իրողութիւնը՝ դա ազգային համերաշխութիւնն է: Համերաշխութիւն — անշուշտ որոշ սահմաններում, հայ ազգութեան բոլոր տարրերի մէջ, յանուն ոչ միայն նրա գոյութեան ու Ֆիզիքական պահպանութեան, այլ և յանուն ընդհանուր կուլտուրայի, քաղաքակրթական առաջադիմութեան:

Իրականութեան զգացումը (*le sens de la réalité*) երբէք չը պիտի պակասէ մեզ՝ մեր զարհուրելի միջավայրում, գուցէ ոչ մի տեղ հանդարտ, աստիճանական էւօլիւսիօնի մեթօդները այնքան հրամայականօրէն անհրաժեշտ չեն, ինչպէս թիւրքաց Հայաստանում...

Ազգային արդիւնաբերութիւնը մէկն է ազգային քաղաքակրթութեան զօրեղ խթաններից, իսկ նա այսօր ուներ ու կործան վիճակի մէջ է. նրա աղբիւրները — վաճառականութիւնը, արհեստ ու ճարտարարեստ — գրեթէ ցամաքած... Պէտք է աշխատել փոքր ինչ կեանք մտցնել անապատի մէջ: Պէտք է բարձրանան ժողովրդի արտադրողական և սպառողական կարողութիւնները: Մեր երկիրը տառապում է ոչ թէ կապիտալիզմի ներկայութիւնից, այլ աւելի նրա բացակայութիւնից. — այն ողբալի գաճաճ անտեսութիւնից, այն նահապետական վայրագ կեղեքումներից, այն խաւար, անյոյս կորածութիւնից, որի մէջ դեգերում են մեր մասսաները դարերից ի վեր... Այնտեղ, հայկական գաւառներում բուրժուազիան, խոշոր, ունեւոր վաճա-

ռականութիւնն անգամ, իբրև դասակարգ, դեռ գոյութիւն չունի կամ թէ ունի ստեղծարար մի գոյութիւն: Ահա մի շարք ծանրակշիռ իրողութիւններ, որ պէտք է ամուր գրոշմենք մեր գիտակցութեան մէջ, մեր ամենօրեայ աշխատանքի ընթացքում: Քարոզելով հանդերձ անդուր, անդադրում մեր իդէալն ու ծրագիրը, արծարծելով, ժողովրդականացնելով մեր քաղաքական ու փիլիսոփայական աշխարհահայեացքը, կուելով — բոլոր խաղաղ օրինական միջոցներով — մեր աշխատաւոր ժողովրդի վաստակը ծծող ցեց, պարագիտ ասորերի դէմ — կեղեքիչ պաշտօնեաների, հարկահանների, կղերի, աղաների, վաշխառուների դէմ — մենք միևնոյն ժամանակ պէտք է ունենանք, իբրև զուգընթաց մտահոգութիւն՝ ընդհանուր ազգային բարգաւաճումը, արդիւնաբերութեան, արհեստի, կուլտուրայի զարգացումը, որ չի կարելի խաթարել ու վտանգել մի միջավայրում, ուր եւ՛ում է ազգայնական մրցակցութեան տենդը...

Այդ բոլոր պէտք է յար և միշտ ունենալ մեր աչքի առջև, մեր ամենօրեայ՝ թէ գործնական և թէ տեսական պրօպագանդի մէջ, թէ մեր իդէալը քարոզելիս և թէ կեանքի մէջ նրան մտցնելիս, արհեստակցական, գործակցական կամ գործադուլային շարժումներ ձեռնարկելիս ու վարելիս: Դասակարգային, աշխատաւորական պայքարը, երբ նա դուրս կը գայ իր սահմաններից — իսկ նրանք դժւած են բոլոր քաղաքակրթւած երկրներում — կարող է դառնալ դրական ու շինարար գործօնից՝ բացասական ու կործանիչ:

Հայ աշխատաւորական պայքարը կ'ունենայ անհրաժեշտօրէն և յայտնի չափով ազգայնական պարունակութիւն:

## Թ Ի Ի Ր Ք Ի Ա

### Ն Ե Ր Ք Ի Ն Վ Ի Ճ Ա Կ Ը

Անուրանալի է որ Ատանայի աղէտը պող ջուր սրնկեց բոլոր լաւատես յափշտակութիւններուն վրայ և ճիշտ այն ըոպէին, երբ Թիւրքիան իր քաղաքակրթութեան պատմութեան արևածագին պէտք ունէր արգասաւոր հաւատքի, յոյսի ու եղբայրական զգացումներու համերաշխ գործակցութեան: Ազատութիւն ու հաւասարութիւն բառերը գունաթափ եղան և իդէալը ընկրկեցաւ այդքան վաղահաս ու անակնկալ ինքնաթխումի մը առջև:

Յիլիկիոյ մահաւան դաշտերուն առջև ուր ոճիրը իր գերագոյն անմահութեանը հասաւ, բարոյական յաղթանակի մեծ դաս մը կար Թիւրքիոյ ճակատագրին ու փառքին համար. սակայն երկրի վարիչները չկամեցան կամ չկրցան օգտուիլ Արդարութեան պղնձէ խարխիւր նետերու համար Թիւրքիոյ ալեկոծութեան մէջ: Այդ

քայլը մեծագոյն նշանակութիւնը պիտի ունենար և ամբարշտութիւնը մտքերը ու զգացումները, և պիտի տւէր պատմութեան ընթացքին մէջէն: Յաճախ պատմական նշանակալից ընթացքներուն գործած սխալ մը ու երկդիմի ուղղութիւն մը կ'անդրադառնան ապագային վրայ և կը թուլացնեն անոր հիմերը:

Ատանայի վայրագ ու ահարկու դէպքը պէտք էր երկրին սրտցաւ ու հայրենասէր մարդոց լուրջ ուշադրութիւնը հրահրէր, որոնք ոչ մէկ նկատումներու ու նախապաշարումներու առջև ընկրկելով՝ բարոյական ու մարդկայնական սկզբունքի ոսկեղէն տառերը քանդակելու էին իրենց երկրին ճակատը:

Թիւրք կառավարութիւնը վարանեցաւ և մեղմացուցիչ պարագաներ փնտռեց ոճիրին ահաբեութեան շուրջը. և եթէ արտաքին և ներքին բողոքի ու զգուշացման խիստ ձայներ չլուսէին, հաւանորէն կառավարութիւնը արևելեան անդգայութիւնով մը—նր խղճի ձայնը այնքան թմրած կերակի—ջանար վարագուրել տիեզերական անյուր հրէշութիւնը:

Ուշ առտն միայն ճշմարտութիւնը խոստովանեցաւ— և թերևս բունի ու ակամայ—երբ անջի օրէն արդէն գիտակ էր սարսափելի իրականութեան: Քննական ձեւակերպութիւնները բաւական զէնք եղան կառավարութեան ձեռք խնդիրը ձգձգելու, հակասական տեղեկագրերով ու վկայութիւններով, ճշմարտութիւնը պղտորելու և ի վերջոյ ջլատելու Արգարութեան ծանրութիւնը: Հայկական անպարտութիւնը խոստովանելէ յետոյ, օսմանեան դիւանագիտական հանձարը, ամբողջ նահանգի մը բարբարոսական քայքայումին առջև, սա անխմաստ ու այլանդակ բանաձևը հրաշակերտեց թէ Ատանայի աղէտը «ցեղային թիւրիմացութեան արդիւնք է... կամ հետևանք ամենամեծ պաշտօնեաներու ցաւալի ապիկարութեան ու անկարողութեան»: Իսկ շատ թիւրքերու համար «ճակատագրականութիւն մը կար գործին մէջ»: Այս խօսքը արևելքի համար մոզականութիւն մը ունի, որուն առջև թիւրքերը կապասն որ զինաթափ ըլլայ բանականութեան և մարդկայնական ամեն ըմբռնում:

Ոչ խորհրդարանը որ լուծութեան ստիպեց Պապիկեանի ու Քէմալ պէյի տեղեկագիրները, ոչ Ջինեորական ատեանները լսելի չըրին մեզի սփոփիչ ձայնը: «Հայերը շարունակ կը փախչին, կը գրէ կիպրոսցի յոյն գրագէտ մը, միշտ կը փախչին: Անոնք կը փախչին ոչ միայն դաշտայններէն ու բոցերէն, այլև արգարութեան անունով կազմած այն դատական ատեաններէն, որոնք յանցաւորները պատժելու տեղ տակաւին միջոցը կը գտնեն անմեղները տանջահարելու»...

Կառավարութիւնը յստակօրէն գիտէր այդ նամէրտ ոճիրին բուն հեղինակները, և սակայն մեզի համար խորհրդաւոր կը մնայ պետ ոճրագործներու անպատժութիւնը: «Դուք այս ոճիրներուն մեղսակից էք» կը պօռար ամերիկացի միսիօնար մը, քաղաքակիրթ մարդու խղճատանքի ըմբոստութեանը մէջ: Ատանայի նախկին եղեռնագործ վալիի երեսին, որ շնականօրէն անպատկառ դիրք մը առած էր:

Կառավարութիւնը ի՞նչ բանէ դրդած կը ջանայ վահանել կամ անողոր Արգարութեան շանթերէն հեռու պահել կարգ մը մարդիկ, որոնք իրենց դիրքով ամե-

նագարշելի և դիտումնաւոր դերը խաղացած են Ատանայի սարսափներուն մէջ:

Կառավարութեան այդ անհասկանալի վարմունքը չկրնար կասկածներ չյարուցանել ու տեղի չտալ արգարացի ենթադրութիւններու. ոճիրը դուրս կ'ելլէ իր կղզիացած ու «պատահական միջոցառում» մ'ըլլալու փաստարկութենէն, որուն ցաւալի ու ֆինանսապաշտպան արձագանքը ըլլալ կը փորձէ Փրանսական մեծ լրագիրը «Le Temps»: Փրանսական լրագրին ձրի, հապճեպ և յաճախ անհաւանական ենթադրութիւնները եթէ բիչ շատ սփոփանք պատճառելու բնոյթը ունին եղեռնատանջ սրտերու համար, բայց չեն կրնար պատմական ճշմարտութիւնը բունագրօք ու եղած արատը սրբել \*): «Հայերը հրեշտակներ չեն», կ'ըսէ յիշեալ թերթը: Ճիշտ է, այդ դժբախտութիւնը չունինք և պէտք է զգուշանանք ալ ըլլալէ. բայց հայ ժողովուրդը երբէք մտքէն չէ անցուցած չէն քաղաքները ու մշակ դաշտերը ակնթարթի մէջ աւերակ ընել, քայքայել ժողովուրդներուն դարաւոր տնտեսական կեանքը և երազել թաւան ու բունբարուտ: Կիսապաշտօնական թերթ մը, այդպիսի յօդուած մը, այդքան թերթ և սրտով, հրապարակ նետելէ առաջ, հարկաւոր էր իմանալ բուն իրողութիւնը, կղզի և ըստ այնմ ժողովուրդի մը անսահման սուգին վրայ դատապարտութեան քղամիդը նետել:

Տարիներու մեր դժբախտութիւնը շատ բան սորվեցուց մեզի և ճանչցանք սրտերու ելեէջները: Շէքսպիրի խօսքերը իրենց տեղը ունին այստեղ.

«Այո, այս անպիտան աշխարհին մէջ  
Ոճրագործութեան ոսկեղոծ ձեռքը  
Կարող է ետ մղել արգարութիւնը»...

Փրանսական մեծ թերթը կը սիրէ նաև ձայնակցել թիւրք կառավարութեան հետ հայոց պատրիարքի հրաժարման դէմ:

Հայոց պատրիարքի հրաժարականը օրւայ կարևոր խնդիրներէն մէկն է Թիւրքիոյ մէջ: Ի՞նչ կը պահանջէ հայ պատրիարքը «ամենախիստ պատժումը Ատանայի կոտորածի բուն հեղինակներուն»: Սա շատ պարզ և բնական պահանջում մըն է ժողովրդի մը ներկայացուցչին կողմէ, երբ կը տեսնէ որ իր հօտը շարունակ զոհն է թիւրք ժողովրդի այլանդակ մտայնութեան, զոր յաճախ կուզեն արգարացնել «պատժութեան ու մոլեռանդութեան» վերագրելով անոնց գործած հակամարդկային ոճիրները: Մանուկ մըն է դեռ, որուն պէտք է խնայել իր արիւնահեղ... զօրանքներուն համար:

Այդ հրաժարումը հաճելի չէ մեր թիւրք հայրենակիցներուն, որոնք ամեն բան «անուշի կապելու» հետևողականութիւնը ունին, երբ... դատապարտեալ կողմը իրենցմէ է: Անշուշտ, Դուրեան պատրիարքը, ոչ մէկ թշնամական զգացումէ թելադրած է դէպի նոր բեժիմը, մենք կը հաւատանք որ ամբողջ հայ ժողովուրդը իր հետ, այն գիտակցութիւնը ունին թէ կը պաշտպանեն ոչ միայն դատ մը որ արդար է, այլ և օսմանեան կայսրութեան պատիւը և հմայքը: Հայ պատրիարքը պնդելով իր հրաժարականին վրայ ցոյց կուտայ

\*) Մեր խմբագրութեան ներկայացրած ներհումին վրայ՝ այդ քերթն ստիպեցաւ գէթ խոստովանիլ, թէ «իւրեւրու պատասխանատու լինը գերակերպ է»:

իր անսասան հաւատքը դէպի օսմանեան երկրի ապագան, որուն լծած է հայ ժողովուրդը իր բոլոր խանդավառութիւնով և կարողութիւններով: Կառավարութիւնը պէտք է անվեհերօրէն և անվերապահօրէն ապացուցանէ որ խտրութեան աչքով չնայիր օսմանեան տարրերուն վրայ և թէ երկրին Արդարութեան առջև մեծ ու պղտիկ չկայ, այնպէս որ ամեն մարդ՝ որ այդ հողին վրայ կապրի և ամեն օտար որ ներս կը մտնէ անոր սահմաններէն, սա զգացուցը ունենայ թէ Թիւրքիոյ մէջ «արդարութիւն կը բուրէ»:

Հայերը եթէ յեղափոխութեան փրկարար գաղափարը պատուաստեցին այդ երկրին մէջ, կուգան հաստատել նաև որ երբէք չեն ընկրկիր ոչ մէկ խոչընդոտի առջև Արդարութեան յաղթանակին համար. ատով կուզեն նաև ներշնչել այն հաւատքը թէ իրենք պինդ կապուած են օսմանեան հողին և իրենց թիւրք հայրենակիցներուն հետ կը յուսադիմեն երջանիկ և աւելի շքեղ ապագաներու: Անոնք կ'ուզեն արդարութեան ծառայել և արդարութիւնով ծառայել:

Ի զուր թիւրք մամուլը կը չարչրկուի հաստատելու որ պատրիարքը իր «հոգևոր» իրաւասութենէն դուրս ելլելու իրաւունք չունի, թէ իր քայլը «հակասահմանադրական» է, թէ կը շահագործէ հայոց անմեղութիւնը յայտարարող պետութեան շրջաբերականը:

Ճիշտ է թէ հայոց պատրիարքը աւանդական իրաւունք մըն է որ կը գործադրէ, որ իր *raison d'être* ունէր իր ժամանակին, երբ մէնմի քրիստոնեայ տարր իր առանձնաշնորհումներով միայն կը մեղմացներ իր սարուկ բայայի օտարութիւնը: Սակայն իրերու ընթացքը և ոգին չեն իրաւցներ թիւրք մամուլին դիտողութիւնները և զայրոյթը: Շատ երկիրներ՝ այդպիսի դարաւոր իրաւասութիւնները, որոնք կը հակասեն երկրի սահմանադրութեան, չեն ջնջեր մէկէն ցնցումներէ և յանկարծակիութիւններէ խոյս տալու համար, այլ կը ջանան ազատ և արդար օրէնքներով չքացնել և հայեցնել անոր գոյութեան իրաւունքը և առանձնայատկութիւնը:

Եթէ Թիւրքիոյ Խորհրդարանը գտած ըլլար իր շաւիղը և Շէրիաթի ու սահմանադրական հոսանքներու մէջ չտարուբերէր, որոնք իրարու այնքան կը հակոտանեն, կ'ըսէ եւրոպացի գրող մը և թէ կրօնական համայնքները իրենց առանձնաշնորհումներէն ձեռնթափ եղած ըլլային կամ թէ հպատակ ցեղերը—դժբախտ բայաները—կոյր բախտին կամ մոլեռանդութեան նշաւակ չըլլային, և արդարութիւնը ու հաւասարութիւնը դուրս ելած ըլլային իրենց հոգետրական շրջանէն, պատրիարքին միջամտութիւնը թերևս անհարկի թւէր, և արդէն արդարագատ վարչութիւն մը պէտք չէր զգացնէր այդպիսի դժարութիւններու:

Կառավարութիւնը կը յայտարարէ պատրիարքին որ ետ առնէ հրաժարականը և կը խոստանայ «անողոր ըլլալ ասկէ ետքը պատահածներուն նկատմամբ»: Անհասկանալի կը թուի մեզի թէ ինչպէս վարչութիւն մը թոյլ կուտայ իրեն, այդքան անգիտակցօրէն, ներել մարդոց որոնց գործած աւերը, նիւթական, մարդկային և բարոյական, այնքան ահարկու են, որքան եթէ արտաքին թշնամի մը յարձակած ըլլար երկրին վրայ, կամ վայրենիք բարբարոսներու հորդա մը միայն պիտի կրնար գլուխ հանել այդքան աղէտ:

Օտար բարբարոսներու արարքը իրերու բնական շարքին մէջ կը մտնէ. օտար մըն է վերջապէս. բայց ինչպէս ընդունիլ և համակերպիլ որ երկրի մը վարիչները կարող են իրենց հայրենիքին դաւաճանել ու զայն մոխրի վրայ նստեցնել: Կառավարութիւնը պէտք է անողոր արդարութիւնով մը պատժէ զանոնք նախ իբր դաւաճան հայրենիքին, երկրորդ՝ որ թիւրք ժողովրդին համբաւին և ազատութեան մահացու հարուած մը տւին, երրորդ ցոյց տալով որ երկրին մէջ օրէնքի առջև բոլոր ցեղերուն հաւասարութիւն կը տիրէ. միայն այս կերպով հնար է հայրենիքին մէջ բարոյական ցանկալի համերաշխութիւնը ստեղծել, յետին կասկածամտութիւնները փարատել: Բարոյական մթնոլորտը պէտք է պատրաստել, էականը ատ է. այդ ալ կ'ըլլայ, երբ հին ըէթիմի մնացորդները կը կրճատուին և ոճրագործ մտքերը ու բազուկները զինաթափ կ'ըլլան և տարրերը կը մարդկայնանան: Վերջերս թիւրք նախարար մը կը պարծենար որ թիւրք ժողովուրդը «արդարութեան խորին զգացողութիւնը ունի»: Ցանկալի է որ կառավարութիւնը աւելի շեշտէ և խրախուսէ այդ ձիրքը, բայց ամենէն առաջ ինքը օրինակը տար այդ «խորին զգացողութեան»:

Թիւրքիան բռնապետութիւնը հարուածելով հերոսութեան նախանձելի օրինակը տւաւ: Ատանայի ահաւոր սուամին առջև կապասներ նաև որ արդարութիւնը պաշտպանելու հերոսութիւնը ևս ցոյց տայ: Առաջինը ժամանակաւոր էր, այս վերջին հերոսութիւնը միայն տևական է որ պիտի լուսադժի հոգիներու մէջ: Թիւրքիոյ ապագան առաջինէն կախած է, այլ երկրորդէն: Հայ ժողովուրդը իրաւունք ունի պահանջելու ազնիւ հերոսութիւնը որ նոր ըէթիմը մաքրէ այն արիւնի ճահիճներէն որ անպատեցին հին Թիւրքիան և այսպէս խորին գիտակցութիւնը ունենայ թէ պատրանքի մը չծառայել...

\*\*\*

Ատանայի աղէտի հետևանքը ծանր եղաւ բարոյապէս և նիւթապէս թէ կառավարութեան և թէ հայ ժողովրդի համար: Կառավարութիւնը միլիոններ տուժեց ֆինանսական տեսակէտով և տարիներով դեռ պիտի տուժէ. հայ ժողովուրդը արիւնաքամ տարիներէ ի վեր, երբ կապասեր քիչ հանգիստ շունչ քաշել, յանկարծ իր բազուկներուն վրայ կը տեսնէ հազարաւոր դժբախտ որբեր, զոր պէտք է պատսպարել և աւերակ գիւղեր, քաղաքներ, զոր պէտք է վերակերտել. միւս կողմէ ահ ու սարսափը սկսած է պատել զինքը, իր գոյութեան վտանգի մասին: Այդ ապագայի անստուգութեան, սանձարձակ և անպատիժ վայրենութեան երեսէն, հայ ժողովուրդը, որ իր հայրենի հողին պլլած էր ամուր, իր դառն սուգը շալկած կը մտաբերէ գաղթել կամ դիմել օրթօքօքսութեան:

Անշուշտ դիւրին բան չէ, դարերով երկրի մը մէջ ապրելէ, միջավայրի հոգեբանութեան ու պայմաններուն սովոր ըլլալէ յետոյ, յանկարծ բախտին դաժան մէկ կատակովը, ձգել հեռանալ ընդմիշտ և ամեն զրկանքներ, տառապանքներ աչքը առնելով, նետուի անձանթ ուղիներու աշխարհներու մէջ և գոյութեան պայքարոտ հիմը դնել:



25 կարելի մեղադրել ժողովուրդ մը—որ ամեն բանէ առաջ մարդ է—երբ դիմէ ան յուսահատ միջոցներու, քանի որ իր ճակատը շարունակ կը բաղնի յուսախաբուածութիւններու և իր տարիներու կերտած շէնքը ու շինութիւնը դատապարտուած են մէկ օր ծոյլ ու սմարդի մոլեռանդութեան զոհ գնալու: Հայրենասիրութեան ու զոհողութեան կոչերը, ինչքան ալ թանկագին ըլլան, աւելի հզօր բան մը կայ, որուն յաղթահարելու համար, հարկաւոր է միմիայն բարի կամք և անվկանդ արդարասիրութիւն: «Մի գաղթէք, կ'ըսեն թիւրք թերթերը, գործքով աշխատեցէք սահմանադրութեան ամրնալուն... Հայրենիքը ուրիշ տարրերու հետ մասնաւորապէս ձեզի պէտք ունի»:

Այս խօսքերը մեր թիւրք հայրենակիցներու կողմէ հեգնոտ գզւականութեան մը տպաւորութիւնը կը ձգեն—խօսք և չար իրականութիւն:

Հայերուն գաղթումը նոյն ազդեցութիւնը պիտի ընէ թիւրքիոյ համար, ինչ որ՝ բողոքականաց հալածանքը ըրաւ Ֆրանսային, երբ անոնք, էն ժիր և արհեստաւոր դասակարգը, հեռանալով կաթոլիկ աններող Ֆրանսայէն, իրենց հետ տարին դէպի օտար երկիրներ լաւագոյն մասնագիտութիւնները, և պարպեցին Ֆրանսան ժիր և ճարտարարւեստ ձեռքերէ, ասպարէզը մնաց կատղած կրօնամոլներուն:

Թիւրքերը կզգան որ հայ տարրը պիտանի է իրենց տնանկ երկրին համար, բայց թիւրք մամուլը պէտք էր հզօր կերպով մատնանիշ ընէր իր կառավարութեան, որ այդպիսի խեղդատակ արդարադատութիւնով, երկրին վարկն ու պատիւը կ'աղարտէր: Մեզի, հայերու համար, ձեռնտու չէ այդ գաղթումը, քանի որ հայ ժողովուրդը սրտովին փարած երկրի բարեկարգութեան գործին—այդ մասին երկու կարծիք չկայ—իր զանգուածին մէկ մասին այդպէս մեկնումով պիտի ենթարկուի բարոյական լքումի, որովհետև իր ցեղակիցներուն դէմ այդ անիրաւ ու անգուղ հալածանքը, կը խորտակէ ազգային համադրական յիշատակներու ու զգացումներու բարոյական զսպանակը: Եւ շատ բնական է, որ դարերու մէջէն տառապանքներէ ու դժբախտութիւններէ ցընձուած և զգայուն ժողովուրդ մը, որ միշտ երազած է հեռաւոր արշալոյսները, խորապէս պիտի զգայ կսկիծը իր համայնքին, որ կեանքի ապառաժին վրայ կ'անէանայ: Սա բարոյական զգացում մըն է մարդկային, և նոյնիսկ կենդանական աշխարհին յատուկ զօր պէտք է յարգել: Թիւրքերը ոչ միայն իրենց ցեղակիցներուն նկատմամբ նոյնքան զգայնութիւն կը յայտնեն, երբ հարկ է, այլև իրենց ոչ-ցեղակից կրօնակիցներուն նկատմամբ, որոնք երկրէն դուրս մղուներով հեռու կապրին:

Հայ ժողովրդին համար գաղթականութիւնը օգտակար կըլլար այն ատեն, երբ աւելին էր որ կը պանդխտէր կամ կը հեռանար. ներկայ պարագային մէջ ցաւալի է: Հայ տարրը պէտք ունի կուռ մնալու՝ ու կապելու օսմանեան հողին և սպաս զնելու իր տաղանդը ու իր գործունէութիւնը ընդհանուր հայրենիքի բարգաւաճման, հաւատարիմ մնալով իր նշանաբանին, թէ «հայ ժողովրդի փրկութիւնը՝ Թիւրքիոյ փրկութեան մէջ է»: Անշուշտ նոյնքան և աւելի հասկացողութիւն մենք կսպասենք թիւրք գիտակից մամուլէն

և կառավարութեան խելացիութեանն ու ողջմտութեանն, եթէ դեռ խակ չեն մնացած, կամ եթէ պատմական «կասկածը» կամ «խղճի խայթը» չկրճեր իրենց սիրտը:

Օրթօօքսութեան դիմելը նոյնպէս նախազգուշական միջոց մը համարուած է հայ ժողովրդին համար հզօր պաշտպանութիւն մը վայելելու յոյսով...

Հայերը, ինչպէս քաղաքակրթական ու յառաջդիմական տարր, իրենց աչքերը դարձուած էին դէպի Արևմուտք. հայը մտքով Ասիայէն կտրուած ժողովուրդ մըն է: Եւրոպացի կրօնաւորներ իրենց առաքելութեան մէջ կը յաջողէին այն բանով որ կրօնի պրօպագանդը կը զուգորդէին կրթութեան ու գիտութեան, մինչ ռուս կղերականները—որոնց փորին մէջ մէյմէկ տակառ վօտկայ կայ, կ'ըսէ ռուս առած մը—տգէտ ու յետադէմ, չունենալով ոչ եւրոպական զարգացումը և մեթօդը, չկրցին մուտ գտնել հայոց մէջ, հակառակ հայ ժողովրդի դէպի «խաչապաշտ» Ռուսաստանը—զոր, ընտանեբար, «քեռին» կ'անւանէր— ունեցած նախապաշարումին: Սա այն շրջանն էր, երբ հայկական միամտութիւնը ցարերուն կը վերագրէր նախախնամական դեր քրիստոնեայ ժողովուրդներու հանդէպ:

Անկէ ի վեր շատ գաղտնիքներ ու երեյթներ լուսաբանեցան և համեմատութիւնները Ռուսաստանի համար նպաստաւոր չեղան:

Ընդհանրապէս պետութիւնները—և գրեթէ առանց բացառութեան—կը շահագործեն Արևելքի մէջ այդպիսի կրօնակից համայնքները, որոնք տեսակ մը կուսան են իրենց շահագիտական քաղաքականութեան: Ռուս կառավարութիւնը նոյնը պիտի ընէ և թերևս աւելի անպատկառօրէն ինչպէս իր բնութեան մէջ է: Ինքը որ «արևելեան քրիստոնեաներու պաշտպան» մեծաշունչ անտոյնը և ձրի իրաւունքը առած է վրան, պատրաստ է «գրկաբաց» ընդունիլ այդպիսի յուսահատները իր փառախին մէջ, բայց պիտի չուշանայ զանոնք գործիք ընելէ իր քաղաքականութեան որ հեռու է պարկեշտ ըլլալէ և պիտի ձգտի ստեղծել հոգեբանական րոպէներ Թիւրքիոյ վրայ՝ ճնշում բանեցնելու, անկէ քաղաքական կամ տնտեսական գոհացումներ ձեռք բերելու համար: Գիււանագիտութեան համար այդպիսի միամիտ ու պահեստի խաղաղիքներ հարկաւոր են և եթէ չկան պէտք է հնարել:

Ռուսաստանը ոչինչ կը կորսնցնէ եթէ 10,000 կամ աւելի ռուսադաւան հայերու զոհողութիւնով— և ինչ հրձանքով այդ մարդազոհը կը կատարէր— իր արևելեան քաղաքականութիւնը պիտի կրնար քալեցնել և նպատակին մօտենալ: Այդպիսիներու ճակատագիրը ու անպահանջ աւելի յեղեղուկ և աւելի աննախանձելի է քան իրենց մայրենի եկեղեցուն գիրկը մնացած հայրերունը, որոնք գոնէ իրենց ազգային յիշատակներուն դրուածան չըլլալու խղճի գոհունակութիւնը ունին:

Պատմութիւնը մեծագոյն դասատուն է, և 19-րդ դարու պատմութիւնը մասնաւորապէս, լեցուն է այդպիսի յուսախաբութիւններով և յուսահատական ու ասպարդիւն քայլերով:

Ռուսադաւանութիւնը ոչ միայն ուրախալի հետեանք չունի, այլև նոր «պէլա» մը պիտի ստեղծէ թիւրք կառավարութեան գլխուն: Թիւրքերը, որբան հնար է, զգուշանալու են զէնք ու պատրուակ տալ Ռուսիոյ իրենց

ներքին գործերուն միջամտելէ: Թիւրքիոյ տմարդի, անհեռատես ու աւանդապաշտ բաղաբականութիւնը եղած է պատճառը, որ օտարները, փոքրիկ բրիտաններու համայնքները ու ազգերը հովանաւորելու կեղծ իքին ներքեւ, տակնուվրայ ըրած են Թիւրքիան, մինչդեռ աւելի լայն և աւելի պարկեշտ բաղաբականութիւնով մը միջազգային դառն բաժակը պիտի կրնային հեռու պահել: Բայց Թիւրքերու գլխուն մէջ՝ նախապաշարուած հսկայ բեւեռ մը կայ զոր դժար կերևի արմատախելը Սահմանադրութենէն յետոյ կուզեն ենթադրել տալ մեզի, և կը սիրենք հաւատալ, թէ պատմութենէն վարդապետուած են և շատ բան սորված, բայց ենթադրութիւնը կը մնայ դեռ ենթադրութիւն, սպասելով իր արմատաբանական եզրակացութեան:

\*\*\*

Օսմանեան յեղափոխութեան բոցափայլ խանդավառութենէն: յետոյ, հակազդեցութիւնը բաւական զգալի եղաւ: Հին սուլթանը ոսկեզօծ գերութեան մը մէջ, հուրիներու գգւանքներուն տակ, իր ոճիրները կը յօրանջէ, նոր սուլթանը, իբր Եպիմէնիդէս, երբ աչքերը կը բանայ իր շուրջը կը տեսնէ աւերածութիւն ու սուգ միայն: Լաւ արամադրութիւններով օժտուած՝ Մէհմեդ Ե., բռնապետութեան հին գոհ մը, կը ցանկայ իր երկրին բարօրութիւնը և կը սիրէ, գոնէ, առանց ներգործական գերակատար մ'ըլլալու, համակրելի և բարի համբաւ մը ձգել, զգալով թէ դժբախտ երկիրը պէտք ունի սրտի մարդիկներու՝ անգթութեան արիւնաթաթ հետքերը անհետ ընելու համար:

Երկրին գերագոյն իշխանութիւնը, ըստ երևոյթին, Խորհրդարանին ձեռքն է. բայց էպպէս Իթթիհատը, ինքն էր որ վերին հսկողութիւնը կատանձնէր իրերուն և մարդոց վրայ, երկրին սահմանադրական ապահովութեան մտահոգութիւնով: «Պետութեան մէջ պետութիւն մը՝ ըսեցաւ Իթթիհատի մասին, բայց ինչքան ալ այդ ազգեցութիւնը քննադատելի ու տարածութեամբ կողմեր ունի, և խուլ պայքարներ ստեղծեց երկրին վարչական, օրէնսդրական և այլ մարմիններուն միջև, սակայն տաքնապալից բողոքներուն, կրցաւ դրութիւնը փրկել: Եր հմայքը և կազմակերպութիւնը անհրաժեշտ էր այս փոխանցական շրջանին, ուր հինի ու նորի ոխերիմ ճակատամարտը կը շարունակէր: Այդպիսի կազմակերպութիւնները, սակայն, իրենց գոյութիւնը և հմայքը կը պահեն, երբ կառավարողին միայն արգարութեան և երկրին բարձրագոյն շահերով, անձնականութիւնները կը նսեմանան և չարաչար չգործածելով իրենց բարոյական ազդեցութիւնը չեն. իյնար կամայական յաւակնութիւններու ու ծայրայեղութիւններու մէջ ու չեն պատրաստեր թշնամական միտնորտ մը, փոխանակ կուսակցական ազատ և լուսաբեր պայքարի:

Թիւրքիան սահմանադրական կարճատե շրջանին մէջ ներքին և արտաքին տեսակետով յուզումնալից շրջան մը բոլորեց: Պոսնա-Հէրսէքի միջադէպը, պալքանեան բարդութիւնները, փափուկ կացութիւն մը ստեղծեցին իրեն համար. սակայն եւրոպական մեծ տէրութիւնները իրենց հզօր և... շահագէտ պաշտպանութիւնը շնորհեցին փրկելու համար նորածին սահմանադրութիւնը որ «օգտակար պիտի ըլլար» Թիւրքիոյ բոլոր ժողովուրդներուն:

Թիւրքերը յարողեցան, շնորհիւ Եւրոպայի համակրութեան, արգիլել, գոնէ առժամապէս, գրեթէ կատարուած իրողութիւն մը, այն է Արեւելի Յունաստանի միացումը: Այս միջադէպը առիթ կամ պատրուակ մը եղաւ Թիւրքիոյ անգամ մըն ալ վախ ազդել անկազմակերպ Յունաստանին, և անուղղակիօրէն սքեցնել Թիւրքիոյ յոյները որ, ըստ Թիւրքերուն, չէին ծածկեր իրենց ազգայնական յոխորտանքները: Արեւելն այն փափուկ հարցն է, խութերով լեցուն միշտ առկախ ու անլուծելի, որ անակնկալներ կը վերապահէ Արևելքի համար:

Սակայն արաբական ու ալբանական ապստամբութիւնները, որ անվերջ և սպառնալից կըլլան հետզհետէ, կը կաշկանդեն երկրին խաղաղ զարգացման նախաքայլերը և կստիպեն անկարելի զօհողութիւններ ընել, երբ երկիրը արդէն ֆինանսապէս այնքան խեղճ է:

Այդ շարժումները մութ կը մնան իրենց շարժառիթներուն մէջ. ինչ ալ ըլլան անոնք, արտաքին գլորուած յետադիմական կամ ազգայնական շարժում, սակաւ որոշ է, այդ շարժումները քանի բորբոքին, այնքան կը շեշտեն ցեղական կամ ազգային ոգին ու հեռը: Ժամանակաւոր զսպումները չարիքը չեն մարեր, այլ կ'անթեղեն: Առավարութեան բաղաբական իմաստութիւնը միայն պիտի կրնայ բանաւոր լուծումը տալ այդ կարգի հրատապ հարցերուն:

Խորհրդարանը իր սկզբնական մեղրալուսնային ամիսներուն մէջ խանդավառ էր, անէծք ու շանթ կը տեղար երկրի աւերիչներու և բռնաւորներու գլխուն: Ապրիլ 13-ի հարւածէն յետոյ, անսպասելի վտանգներու մտավախութիւնով վերապահ դիրք կը բռնէ և զիջող ու յարմարող կը դառնայ:

Խորհրդարանին մէջ ընկերական մեծ հարցեր չյուզեցան և եթէ այո, անոնք ջուրի մէջ դաշոյնի հարւածներ եղան: Օսմ. յեղափոխութիւնը ամեն բան «հուրի-յէթ» — ազատութիւն բառին տակ կը պարտկէր, առանց որոշակելու անոր տարրերը: Թիւրքերը որ մեծամասնութիւն էին, ընդհանուր հարցեր լուծելէ առաջ «տիրող ցեղին» դիրքը կուզէին փրկել: Թիւրք ժողովուրդին յետագէմ վիճակը, կրօնական մոլեռանդութիւնը, կը թելագրէին Թիւրք մեծամասնութեան, կամ անոնց ղեկավարներուն, սահմանադրական ազատութիւնը ձեւել աւանդական պայմաններուն վրայ և նոյնիսկ բռնադատել անոր ոգին: Շէրիաթը սահմանադրութեան դէմ կը դառնար և իսլամական օրէնքը, սովորութիւնը, բարքերը կը պահանջէին իրենց ուրոյն իրաւունքները: «Մենք Եւրոպայէն կրնանք առնել ինչ որ կը համապատասխանէ մեր Շէրիաթի ոգուն», կըսէր երեսփոխան հօծա մը: Շէրիաթի սկզբունքը շատերուն համար համոզմունք մըն է, շատերուն համար պատրուակ մը, սահմանադրութեան էութեան խառն ուղղութիւն մը տալու համար: Ամ սահմանադրութիւնն զէնք մըն էր հպատակ ազգութիւններու իրաւունքները կաշկանդելու, իսկ Շէրիաթը անուղղակի միջոց մըն էր տիրող ցեղին գերակշռութիւնը ապահովելու համար: Սահմանադրութիւնը այսպէս երկդիմի և երկսայրի բնաւորութիւն կստանար և կ'իյնար *cercle vicieux*-ի մը մէջ:

Արդիւնաւոր և կուռ գործունէութիւն մը չէր կարելի սպասել Խորհրդարանէ մը, ուր ժամադրուած էին

երկրին անփորձութիւնները, և որոնցմէ փոքրամասնութիւնը միայն քիչ շատ ծանօթ էր երկրի ներքին ու արտաքին պայմաններուն և նոյնիսկ աշխարհագրութեան: Իր գործունէութիւնը խօսքի և ծրագրային շրջանը դեռ չէ բոլորած. երկրին ապահովութեան ու հաղորդակցութեան տարրական և էական հարցերը լրում և նոյնիսկ լուծում չեն ստացած բոլորովին:

Օսմ. սահմանադրութիւնը ոչ միայն չբանաձևեց մեծ սկզբունքներ, այլև մաքառեցաւ կարգ մը համաշխարհային հարցերու դէմ. բւարկեց օրէնքներ մամուլի ազատութեան, քաղաքական ընկերակցութիւններու, գործադուլի, գումարումներու, կրթական ազատութեան դէմ. այսպէս սահմանադրութիւնը ուրականային և թշուառ կերպարան մը կստանար:

Քրիստոնեաներու համար զինուորագրութեան հարցը, ընդունեցաւ Խորհրդարանին կողմէ: Թողովորդին մէջ դեռ մեծ մաս մը այդ իրաւունքին հակառակ է: Թիւրքերը իրենց բանակին մէջ կը տեսնէին տիրապետող ցեղի խորհրդանշանը, և հոգ էր իրենց բոլոր ուժը: Քրիստոնեաներու զինուորագրութիւնով դարաւոր նախապաշարում մըն է որ կը տապալի և ահագին յեղափոխութիւն մը կը կատարուի հոգեբանութիւններու մէջ: Քրիստոնեաները կզգան շօշափելիօրէն որ իրենք երկրին հաւասար քաղաքացիներ են: Եթէ առաջին քայլին մէջ անխուսափելի դժարութիւններ ու անպատեհութիւններ կը ներկայանան, և շատերու համար նոյնիսկ հարցական մտահոգութիւններէ զերծ չէ, սակայն ժամանակի ընթացքով, բանակը պիտի ծառայէ որ տարրերը աւելի սերտանան, եղբայրանան և աւելի փարին ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան գործին և միանգամայն պիտի աւելնայ երկրին պաշտպան ուժը և միաբանութիւնը:

Հին նախարարներէն մէկը հակառակելով քրիստոնեաներու զինուորագրութեան, կը յայտարարէր թէ «քրիստոնեաները Ռուսիոյ առաջապահներն են»:

Սա սխալ ըմբռնում մըն էր կամ պատրակ մը խորամանկ թիւրք դիւանագէտներուն, զինուորական ուժը, այսինքն տիրապետող ուժը, միշտ թիւրքերուն վերապահելու համար, ինչպէս սպարտացիք կընէին իլոզներուն հանդէպ: Սա վայրենի ըմբռնումն է, երբ օրէնքի տեղ կամայականութիւնը կը տիրէ:

Խորհրդարանը զինուորագրութիւնը ընդհանրացնելով և ձրիակեր պաշտօնեաներու թիւը նւազեցնելով, դուռ կը բանայ և գրգիռ կուտայ որ թիւրքերը, որոնք գզաթներու կպած էին և յաւիտենօրէն իրենց եղեգէ գրիչները կը սրէին ու կը լզէին, նեաւին գործունէութեան ուրիշ և աւելի ազատ ասպարէզներ և կապին շահերով ու նախաձեռնութիւնով միւս տարրերուն հետ:

Երկրին ներկայացուցիչներու սակաւութիւն դրական որոշումներուն մէջ է նաև Եւրոպա դեսանդներու առաքումը: Կրթութիւնը և դաստիարակութիւնը միայն պիտի կրնան Թիւրքիոյ մակարդակը բարձրացնել և այդ մասին եղած բոլոր զոհողութիւնները ընդունայն չեն անցնիր, և միմիայն ապագայ այդ սերունդն է որ պիտի կրնայ բանդել մոլեռանդութեան ու տգիտութեան բերդերը և արորել ուղեղները եւրոպական լոյսով ու գիտութիւնով:

Կուսակցութիւններու պակասը, դադարակալական հա-

մախմուռները Խորհրդարանին մէջ զգալի են: Իթի-հատական մեծամասնութիւնը օգտուելով հանգամանքէն կուզէ դարձնել երկրի ապագան, իր հայեցակէտին համեմատ:

Ոչ մէկ խորհրդարան չկրնար ապրիլ և պողաբերիլ առանց գիտակից և կազմակերպ կուսակցութիւններու: Անոնց դադարակալական պայքարներէն պիտի ծնի լուսաբանութիւնը, երկրին յառաջդիմութեան ու շահերու տեսակէտով: Իթիհատի մեծամասնութիւնը կուսակցութիւն չներկայացնելով, այլ անկապակից հաւաքոյթ մը, որ մէկ օրէն միւսը համոզմունք, տրամադրութիւն և տեսակէտ կը փոխէ: Հին խորհրդարանը յորջորջեցաւ «էվէթ էֆէնտիմ», նորը արդէն «գապուլում» բնորոշ անունը ստացած է: Բայց եթէ համեմատութեան ելլենք հին Խորհրդարանը, կարծես աւելի ընդունակութիւն ունէր և աւելի հասունութիւն:

Մէկ տարւան խորհրդարանական փորձը դպրոց մը եղաւ երեսփոխաններուն համար, աւելի հետաքրքրելու սահմանադրական հարցերով ու հասարակական վարդապետութիւններով: Այդ կարճ ժամանամիջոցը բարոյապէս օգտակար եղած պիտի ըլլայ գոնէ, պատրաստելու աւելի խորհող ու գիտակից երեսփոխաններ, հետեւապէս և դադարի ու սկզբունքի ծառայող կուսակցութիւններ, որոնց մաքի անկաշկանդ ու լայն հայեացքները, պայքարները, ստեղծելով երկրին մէջ շահերու ներդաշնակութիւնը ու զուգորդութիւնը, պիտի կրնան կեդրոնացնել գիտակցութիւնները ընդհանուր հայրենիքի կուսակցութեան վրայ, և միանգամայն ինչ որ անհրաժեշտ է, պիտի ջանան սահմանադրութեան վերադարձնել անոր իրաւունքները և էագօր նշանակութիւնը... քաղաքակիրթ և ժամանակակից ըմբռնումով:

## ՌՌՍԱՍԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐԸ ՌՌՍԱՍԱՆՈՒՄ

Նօյօրօսիսկի Զինուորական Ատեանը քննելով յնօջօրօսիսկեան հանրապետութեան յայտնի գործի մէջ մեղադրուողներին՝ անհրաժեշտ համարեց արձանագրել դատի նիւթից դուրս, հետեւեալ կարևոր և Ռուսաստանի համար շատ բնորոշ յայտարարութիւնը.

«Նօյօջէրկասկի դատական պալատի նախագահ Խօզէկովսկու և դատախազի օգնական Պլատկովսկու արարքները հասցնել ի գիտութիւն արդարադատութեան նախարարին: Իսկ առանձին կարևոր գործերի քննիչ Լիժնիի արարքները, որ թոյլատրել է իրեն դատական քննութեան միջոցին ա ն կ'ա ն ո ն ու ա պօր ի ն ի գ ո ը ը ո ղ ու թ ի լ է ն ն եր և ո ճ ի ր ներ նախատեսուած պատժական օրէնսդրութեան 361 յօդւածով—հաղորդել պալատի դատախազին»...

Այս հակօրինական գործերի մասին մանրամասնները պակասում են առայժմ. սակայն այն կարևոր փաստը որ Զինուորական Ատեանն անգամ չի կարողանում հանդուրժել օրէնսդրութեան յպաշտպաններին՝ մի կարգ ապօրինութիւնները, որ բռնութեան ու անարդարութեան այդ տիպական հիմնարկութիւնը ևս քննիչներին ու դատախազներին այդքան ծանր կերպով ամբաստանում է՝ ցոյց է տալիս, թէ ոձիւնները որքան ազդակող են, կեղծիք-

39  
25

ները որքան ակներև և Ստրուկ համառուսական ոստիկանութեան ձեռքին՝ օրէնքի յպաշտպանները՝ հանդիսանում են ամենամարտական ու վատասեւեւ տարրը։ Հետամուտ պատիւներ ստանալու, ստորիճանը մեծացնելու անյագ տենչին՝ նրանք ոչինչ չեն խնայում արդարութիւնը ունակութեան և իրենց անհատական դիրքն ապահովելու։ Այս բոլորը այդ ցաւատանջ երկրի ամենօրեայ, սովորական բարբերն են։ Եւ դա բնաւ նորութիւն չէ մեզ համար։ Նորութիւն է այն, որ Զինւորական Ատեանն է հանդէս բերում այս անգամ կեղծիքները։

Ներկայ խնդրում մեզ առանձնապէս հետաքրքրողը Լիժնի անձնաւորութիւնն է, որ մեղադրւում է Զինւորական Ատեանի կողմից, պատժական օրէնադրութեան 361 յօդուածի համաձայն, մի շարք ոճիրների, կեղծիքների մէջ։ Այդ քննիչի հրահանգով կովկասում ձերբակալւած են մօտ 500 հայեր յաշնակցական՝ անւան տակ։

Ամենաբարձր հայաձանքի ենթարկւած այդ հարիւրաւոր հայերը—որոնց թւում հիւանդներ և ծերունիներ—քաշ են տրւում նոյն այդ Լիժնի ձեռքով դէպի Նովո-չերկասկ դատելու։ Ամեն հնար գործ է դրւած անպատելու, անարգելու կայանաւորներին, հասցնելու նրանց յետին ոճրագործի աստիճանին։ Մարդիկ առանց պատճառի, լոկ կասկածով ամբաստանւած կրում են ամեն տեսակ զրկանքներ, օրպէսզի քննիչ Լիժն կարողանայ «կարիէրա» ստեղծել բարձրանալ, ապահովել իր դիրքը։

Մայրաքաղաքի «Բէ» թերթը մի շարք փաստեր է պատմում արդարագատութեան այդ եղակի յպաշտպանի՝ կեանքից։ Զինւորական Ատեանի ամբաստանութիւնը Լիժնի նկատմամբ, հարկաւ, բացառիկ մի երևոյթ չէ... «Դաշնակցութեան գործի» առիթով ևս—նոյն թերթի ասելով—արդարագատութեան նախարարութեան մէջ կան բաւականաչափ փաստեր, որոնք սպասուցանում են Լիժնի կեղծիքները նաև այդ խնդրում։ Եւ այսպիսի մի բարոյական այլանդակութեան, մի ոճրագործ քննիչի ձեռքն է յանձնւած այնքան հայերի ձակատագիրը։ Ինչով երաշխաւորենք, որ նրա բոլոր կեղծիքները պիտի բացւին և որ բազմաթիւ անմեղ քաղաքացիներ չը պիտի կորչին այդ փոքրիկ բիւրօկրատի քմահաճոյքով։

Ռուսական արդարագատութիւնը այս անգամ գոնէ պիտի կարողանայ արդեօք պատժել իսկական ոճրագործին, թէ՛ դարձեալ համառուսական ոստիկանութիւնը պիտի միջամտէ գաղտնի հրամաններով և պիտի առնէ իր հովանաւորութեան տակ՝ Լիժնիին ու նրա բոլոր շահատակութիւնները...

Առայժմ բնութեան սպասուորը շարունակում է իր վայրագ արշաւանքը հայ մտաւորականութեան դէմ, չը նայեա՞ծ այն աղմուկին, բողոքներին, որ բարձրացել են ռուսական և արտասահմանեան մամուլի մէջ։

**Ս Օ Ց Ի Ա Լ Ա Կ Ա Ն**

**ԱԶԱՑ ՍՏՔԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ**

Բողոքի մի անօրինակ հոյժ է անցնում ամբողջ քաղաքակիրթ աշխարհի վրայից։ Պարիզը վերապրում է յեղափոխական մեծ օրերի ցատուճները։ Բոլոր երկրները, ըստ ամենդրութեան, ձայնակցում են Պարիզին։ Բոլոր ազատ մայրաքաղաքներում՝ հսկայական թափօրներ և ցոյցեր, ընդ-վզումի ու դարչանքի փոթորիկ...

Ի՞նչ է պատահել։ Սօցիալիզմը չէ մեն-մենակ ցոյցերի դաշտում, այլ և պարզ, չափաւոր բաժակալարութիւնը, ամբողջ ազատութիւնը և ազատախոհ մարդկութիւնը...

Պատահել է մի անսովոր անցք, որ տնում է մեզ դէպի միջնագարեան խաւարակուռ ու ոճրալի դոյութեան դիրկը, նահատակել է Սպանիայում, Բարբելոնում, ազատ միտքը, յանձին մի պարզ բաժակալարականի, յանձին մի ազատ մտածողի (libre penseur)։ Նահատակել է նոյն սև, դաժան կղերական բռնակալութեան ճիրաններում, որ դեռ կանգուն է տարբախտաբար քաղաքակրթութեան հօրիզոններում, որ անյիշատակ դարերից ի վեր—յանուն Աստուծոյ և բոլոր սին բանդագուշանքների—ձգտել է դարբնել մարդկային միաքր վանական հեղք ու տափակ աշխարհայեցութեան շրջանակներում, հալածել է մի վայրենի, մի թունաւոր ատելութեամբ բոլոր ազատ մտածողներին, շանթել ու բանադրել է դժոխքի անեճքներով, բարձրացրել է կախաղաններ ու խաղաղիներ... Այ՛ն, դեռ կանգուն է այդ ոճրագործ ուժը, անգամ այսօր, դիտութեան վիթխարի աւաջադիմութեան դարաշրջանում, դեռ կայ բոլոր երկրներում «սև, փարաջակիր Ինտերնացիօնալը», կղերքը, որ մերթ-ընդ-մերթ իր ազդեցութեան կաճառներից, ինկվիզիցիայի, հաւատաքննութեան իր մահաբոյր ամբիօններից սպասուալիքներ է արձակում մարդկութեան լաւագոյն զաւակներին, բոլոր նրանց, որոնք չեն ուզում ձկել իրենց պարանոյք կրօնական քրմերի առջև, բոլոր նրանց, որոնք ձգտում են ազատել միտքը բերտ, հնաւանդ նախապաշարունակներից, «աստուծութեան» ու «նախախնամութեան» կապանքներից և տալ նրան այն ուղղութիւնը, որ պատշաճում է դիտութեան ու բանականութեան։

Ատելութիւն է քարոզում յանուն մի կրօնի, որ հռչակել է, իր հիմնադրի բերանով իսկ՝ սէր ու տիեզերական եղբայրութիւն։

Հալածանք է քարոզում յանուն մի կրօնի, որ նոյն հիմնադրի բերանով հրահանգել է անասման համբերութիւն, ներողութիւն, մարդասիրութիւն։

Այդ ցաւատանջ հակասութիւնը եղել է միշտ բոլոր կրօնների էութեան մէջ։ Նա ծուծն է եղել և նրանց երկրաւոր սպասուորների «տակտիկ», գործելակերպի։

«Աստուծը բարի է, վեհանձն, գթաւատ»...

Բայց նոյն Աստուծոյ անունով հարիւր հազարաւոր մարդկային ողջակէզներ կուլ են դնացել հաւատաքննութեան անարգ Մողոքին։

«Սէր, կարեկցութիւն, համաշխարհային եղբայրութիւն»։ Բայց այդ մեծ նշանաբանների անունով—խարոյկներ, կախաղաններ, մասսային դնդակահարումներ։

Ո՞վ է Բարբելոնի նահատակը։ Ինչու սպանեցին Ֆերրերին... Թւում էր, թէ անդարձ անցել էին այն սարսափելի ժամանակները (1600 թ.), երբ Հուսիի Campo dei fiori հրապարակում, փարաջաւոր դաշնիկի ցնծագին աղաղակների մէջ, ճարձատում էր խարոյկի վրայ մեծ փիլիսոփայ Ջորգանօ Բրուճօի կենդանի մարմինը։

Թւում էր, թէ Ալլտերների թունաւոր խարազանումներից, յեղափոխութեան ու դիտութեան պանծալի նաճումներից յետոյ առմիշտ ջախջախւած էր միջազգային կղերականութեան հազարազլխեան հիդրան... Բայց ահա 20-րդ դարը, ահա 1909 թւի հոկտեմբերի 13-ը բերում է մեզ մի դողացնող անակնկալ, որ սառը ջուր է մաղում ազատութեան բարեկամների յաւատես երազների վրայ և որ ստիպում է ամենուրեք սեղմել շարքերը այն մշտադալար, հոգեւոր բռնակալութեան դէմ, որ դարեր շարունակ թև թևի տւած թագաւորներին, իշխաններին, բոլոր աշխարհիկ բռնաւորներին, պատնէշ է կանգնել ազատադրական ամեն տեսակ հոսանքների առջև։

Անակնկալը դալիս է հաւատաքննութեան զաղրելի որբանից, Սպանիայից, որ իր քաղաքական-կղերական կազմակերպութեամբ մի տեսակ ժամանակավրէպ է եւրոպական արեւմուտքում... Մի երկիր, որ բաւառի կերպով փութում, կազմալուծւում է, յանձնւած լինելով՝ կղերա-աշխարհիկ ուժերի խնամակալութեան։ Գայրոյնների տեղ՝ անասելի

առատութեամբ վանքեր, որ ցանցապատում են այդ դժբախտ երկիրը, ծծում նրա կենսական հիւթերը, խեղդում են ժողովուրդը իրենց իսկ նիւթած խաւարի, չքաւորութեան ու սարկութեան մէջ: Ազգաբնակչութեան 70 տոկոսը դեռ անգրագէտ... Այդ վիճակն էր, որ յարուցեց կատուածի վերջին հերոսական ապստամբութիւնը՝ Նա ուղղեց միաժամանակ աշխարհիկ և հոգևոր իշխանութեան դէմ: Նա խեղդեց արեան բարանիքների մէջ: Մի անգամ ևս դեպիցիան յաղթանակեց ամենատրդար, ամենավեհաբան դատի դէմ: Եւ թագաւոր ու եպիսկոպոսներ վճռեցին վրէժխնդիր լինել: Մոնթուլիէ բաստիլը լցեց քաղաքական կալանաւորներով: Սկսեցին ուժածիգների, ցուցարարների գնդակահարումները: Եւրոպան լուռ էր: Ալէկիւնում էր միայն կարմիր Ինտերնացիոնալը, որի հարազատներն էին կոտորում սպանիական տանջարաններում, որի վետմ պարտքն ու առաքելութիւնն է՝ լինել դրօշակիր-առաջապահը ամեն մի արդար բողոքի, շարժման:

Բայց անհա բարբարոսութիւնն անցաւ բոլոր ընդունւած սահմանները, մահաւան դատապարտեց մի անմեղ մարդ, թէկուզ և յազատ մտածող՝ մի մարդ, հակակերական ու հանրապետական... Քր ան չ է ս կ օ Ք եր բ եր: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհն էր, որ ոտքի կանգնեց: Եւ սակայն, դահիճները անխռով մնացին, մահովճիւղը իրագործեց, ընդդէմ ամբողջ լուսաւոր մարդկութեան: Ոչ մի փաստ, ոչ մի ապացոյց հրապարակ եկաւ այդ շարագործ ու այլանդակ դատապարտութեան միջոցին, ոչ մի փաստ, որ հաստատէր այդ մարդու մասնակցութիւնը կատալոնի շարժման մէջ: Եթէ անգամ հաստատէր էլ, դարձեալ սպաշեցողիչ անակնկալ պիտի լինէր մահովճիւղը մի մարդու դէմ, որ ամբողջ կեանքը նւիրել է ուսուցչական, կրթական գործին, որ եղել է իր երկրի մտաւոր վերածնութեան մի ռահվիրայ և իբրև այդպիսին վաստակել է բազմաթիւ ու հռչակաւոր բարեկամներ արևմտեան բոլոր երկրներում: Բայց Ֆերրեր անմեղ էր:

Նա մեղաւոր էր, անտարակոյս, մարդկութեան ու մարդկայնութեան սխտիմ՝ թշնամիների, սպանիական կղերի աչքում, մեղաւոր էր, որովհետև ամբողջ կեանքը քարոզել էր՝ առանց երբեք բռնի միջոցների դիմելու՝ նորագոյն դիտական աւետարանը, դաստիարակել էր աճող սերունդը, ձգտել էր ազատ պահել նրան կղերական ապականիչ կրթութեան՝ ազդեցութիւններից:

Նա հիմնել է հարիւրաւոր դպրոցներ, ուր մտցրել է բարոյական, քաղաքացիական և միանգամայն գիտական ու բանաւոր սխտեմը (*éducation scientifique et rationnelle*), աշխատել է մշակել ներդաշնակ անհատականութիւնը, — ֆիզիկական, մտաւոր ու բարոյական — զարգացնել միանգամայն կամքն ու իմացականութիւնը, ազատ ամեն տեսակ միտելական, գերբնական ներշնչումներից, որոնք վանական միջոցաւորի մէջ սպանում են սերունդները:

Այդտեղ էր Ֆրանչիսկօ Ֆերրերի աններելի յանցանքը և այդ հեղ առաքինի մարդը, որ իր հայրենիքի և մարդկութեան բարիքն էր միայն բաղձացել ամենամարդ կերպով ոչնչացրեց Մոնթուլիէ պարիսպների տակ: Նա գնաց Տելեզիօի, Արիօրանօ Բրունօի, Իտիեն Գօլէի և անթիւ ուրիշների հետ հանգչելու գաղափարի մեծ նահատակների պանթէօնում: Նա մեռաւ ու անմահացաւ... Որովհետև նահատակները չեն մեռնում, ազատ միտքը չի նահատակուում...

Պատմական օրեր են: Որքան մխիթարական ու հրահանգիչ է, կատարած ոճրի հանդէպ, համաշխարհային այս զօրաշարժը, այս հզոր ու գեղեցիկ ըմբոստացումը: Ֆրանսիան — պատիւ նրան — այս անգամ ևս տւեց զօրեղ արդանշանը: Նա արդէն պարտաւորուում է յաւերժացնել նահատակի յիշատակը՝ արժանաւոր մի արձանով: Բայց ամենից ուշագրոււր այն չքնաղ թափօրն է, որ կատարեց քիչ առաջ Պարիզում, սօցիալիստական կուսակցութեան ղեկավարութեամբ և ուր հարիւր հազար յազար յեղափոխական և անցան օրինակելի կարգապահութեամբ տիեզերական մայրաքաղաքի փողոցներից ու հրապարակներից, իրենց բուն ցասումը ժայթքելով Սպանիայի և աշխարհի

դահիճներին: Ի՞նչ պատկառելի կազմակերպութիւն, որպիսի՛ անհեղ ու հոյակապ ուժ, որ դաշտ էր իջնում Ժօրէսների ու Ղալիանների առաջնորդութեամբ, ցուցադրելու իր վաշտերը, զգայնելու իշխողներին իր լուելեայն սպառնալիքը, նշմարել տալու գալոց հզօր ու խօրական թափահարումները՝ հեռանկարը... Անմուռնայի օրեր էին, եղակի, աննախընթաց նոյնիսկ Ֆրանսիական պատմութեան մէջ \*):

Պարծանք Ֆերրերին, որ գիտցաւ այնքան արիաբար մեռնել իր անած դաղափարի համար. պատիւ սօցիալիզմին ու ռամկավարութեան, որ այնքան առնաբար թարգմանեցին համաշխարհային վերաւորած խղճի:

Ձեռնոցը նետաւ է կղերական իշխանութեան կողմից և նա կը բարձրացւի իր ժամանակին, դահիճները վաղ թէ ուշ պատասխան կը տան յեղափոխական արդարավրէժ Մտտուոյ առջև: Ֆերրերի նահատակութիւնը կը ցնցէ ու կը թափեցնէ բոլոր երկրների մտաւորականութիւնը և նոր սնունդ կը մատակարարէ հ ա կ ա կ դ եր ա կ ա ն պ ա յ ք ա ռ ի ն:

Մեղ ձօտ ևս, տարաբախտաբար, այդ պայքարը դեռ պահպանում է իր այժմեութիւնը, — դիտեցէք վերջին իրարանցումը Գաշնակցութեան դէմ — դեռ կան հայկական միջավայրում անապատականներ, հնադարեան որոճողներ, որոնք էթէ ունենային, սպանիական կղերի նման, իշխանութիւն իրենց ձեռքում, չէին վարանի կախաղաններ ցցելու իրենց մի կարգ հակաակորդների դէմ... Կայ և անփարաջայ, աշխարհիկ կղերը, կան աշխարհիկ վարդապետներն ու տիրացուները, որոնց շէֆերը եղել են նոյնիսկ տանեակ տարիներով Եւրոպայում, բայց բնաւ հեռու չեն գնացել տերտերական աշխարհայեցութեան սահմաններից... Այդ բոլորը կայ մեզ ձօտ: Եւ ինչպէս ամեն տեղ մեր երկրում ևս կղերը խօսում ու գործում է իր դ ա ս ա կ ա ը դ ա յ ի ն տիրապետութեան ու շահերի անունով. ինչպէս ամեն տեղ, մեզ ձօտ ևս, նա շահագործում է ժողովրդային տգիտութիւնը նոյն նպատակով... Թէկուզ և շարունակ փարսեցիօրէն «Ատուած» ու «Եկեղեցի» աղապակելով: Դրանք ազատութեան և բնականն առաջադիմութեան մշտնջենաւոր թշնամիներն են... Հայ սթափաւոր երիտասարդութեան, մտաւորականութեան վրայ պարտք է ընկնում՝ խ ե լ ա ց ի ու ս ի ս ս ե մ ա տ ի կ պ ր օ պ ա գ ա ն դ ո վ անդամաւորել աստիճանաբար ժողովրդային մարմնից կպած այդ պարագիտ գոյութիւնը:

Զ Է Զ Ա Ր Է Լ Օ Մ Բ Ր Օ Զ Օ

Այդ մեծ կեանքն էլ մարեց... ցաւի, կարեկցութեան յորձանքի մէջ, սարսափելի ոճրալուրի ազդեցութեան տակ: Այդպէս էլ հազարեց հեռագիրը. Ֆերրերի գնդակահարման լուրն առնելուն պէս, Լոմբարդոն անգամալուծեց և քիչ յետոյ մեռաւ: Բարեկամի ողբերգական մահը այնքան խորն էր խոցել այդ զբայուն մարդու սիրտը, որ նա չը տարաւ և ինքն էլ գերեզման իջաւ Ֆերրերի ետեկից:

Լոմբարդոն էլ մեծացել էր «ազատ մտքի» դպրոցում և դեռ պատանեկան հասակից յայտնի էր արդէն, իբրև կատակ *libero pensatore*: Ո՞վ է արգելում պատանիներին՝ կրել այդ ըմբոստ սիտոնը — «ազատ մտածող»... Ինչո՞ւ միւս կողմից թոյլատրելի է, որ կրօնի սպասաւորները 8—9 տարեկան հասակից արդէն ձուլեն մանկական ուղեղները՝ ըստ իրենց քմահաճոյքի, խոթեն մանուկ գլուխների մէջ այլ և այլ «դօգմաներ», «գաղափարներ», խորհուրդներ, որոնք առ ի չէոյէ քննադատական կարողութեան՝ արմատանում են աճող սերունդի դիտակցութեան մէջ և այնքան յոռի հետևանքներ արտադրում հասարակական գործունէութեան ընթացքում...

Բայց Տուրինի հռչակաւոր պրօֆէսորը կանգ չ'առաւ

\*) Այդ հոյակապ քափօրներն արդէն ունեցան իրենց անմիջական արդիւնքի նոյնիսկ դժբախտ ֆերրերի հայրենիքում. Մօրաի ուրագործ միխիստրոպիւրի փախուստ սեց հաստատարային անարգանքի ակ եւ ազատամիտներն անցան գլուխ կառավարութեան:

ազատ մտածողութեան՝ սկզբունքի վրայ: Նա ձևակերպեց այդ վերջինի բոլոր լրացուցիչ սկզբունքները և դառնանքով հանդերձ սպինոզայական ապաստանութիւնը\*): դառնալով հանդերձ գիտական աշխարհի զարդերից մինը, հիմնելով գրական կամ մարդաբանական դպրոցը իրաւագիտութեան ու ոճրաբանութեան մէջ\*\*), նա զինւորագրուեց Խտակայի սօցիալիստական կուսակցութեան շարքերում... Գիտնականը պատուեց իրան՝ մարտնչողի տիրոջսով: Մեծ ուսումնասէրն ու փիլիսոփան ներփակում էր և մեծ, իդէալիստ ու խանդավառ մի հոգի, որ թերևս Լոմբրոզոյի ամենահրապուրիչ գարշն էր: Եւ այդ մեծ հոգին, որով իրաւամբ պարծենում էր իտալական սօցիալիզմը, գիտէր ձայնակցել մարդկային և իտալական սօցիալիզմը, երկրագնդի բոլոր ծայրերում. յուսահատ մաքաւումներին երկրագնդի բոլոր ծայրերում այդ փափուկ, գերզգայուն սիրտը ամբողջապէս հաղորդակից էր տիեզերական տառապանքին. նրա հմայիչ գեղեցիկութիւնը արտայայտուում է և այն մի քանի խօսքերի մէջ, որ Լոմբրոզոն ուղղել էր մեզ տարիներ առաջ թիւրքահայ ժողովրդի նահատակութեան առթիւ.

«Շը կայ Եւրոպայի մէջ սրտի տէր մի մարդ, որ չը վրդովի համոզէ այն վայրագութիւնների, որ քիւրդերն ի գործ կը դնեն հայաստանի մէջ, կառավարութեամ ակնյայտմի աշակցութեամբ... Կ ու զ է ի ե ր ի տ ա ս ա ը դ Լ ի ն ե Լ, ո ը կ ա ը ո ղ ա մ ա յ ի օ գ մ ե Լ ձ ե գ տ ա ը բ ր ձ և ո վ, ք ա մ խ օ ս ք ե ը ո վ ո ւ գ ա մ գ ա տ մ ե ը ո վ»...

**Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն**

**Հ Ա Մ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ր Գ Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ա Կ**

**IV**

Անգէն ժողովուրդը ազատ ժողովուրդ է: Նա չի կարող վայելել տեղաբար իր նւաճած ազատութիւնները՝ ոչ մի ըէֆիմի տակ—ոչ սահմանադրական միապետութեան, ոչ իսկ ռամկավար հանրապետութեան մէջ: Բուրժուա, աւատական, զինւորական, կղերական դասակարգերի ծոցում միշտ անպակաս են դաւադիր տարրեր, պատրաստ աջող վայրկեաններում խեղդելու

\*) Տիեզերի առանց Աստուծոյ—*Universo privo di Dio*—տիեզերքը, իբրև ինքնին գոյութիւն ունեցող մի զանգամ, անկախ «գերբնական» ազդակներից, ենթակա իր յասուկ էւօլիցիայի օրէնքներին: \*\*) Լոմբրոզոն տիեզերական հուշակ հանեց իր մի ցարփ փաստական ուսումնասիրութիւններով, որոնց մէջ կենտրոնական տեղ է բռնում «Ոնրագործ մարդը» (*L'uomo delinquente*), հրատարակւած 1877 թիւն եւ ապա հետզհետէ լրացւած: Այդտեղ է արժանուում իսկական Լ օ մ բ ր օ օ ի գ մ ը, այն քերիան, որի համեմատ յանցագործը—գող, աւագակ, մարդասպան ելլն—իբր թէ օժտւած է ժիզիկական, օրգանական յասուկ արասներով, սարկանոնութիւններով (*anomalies*), որոնք իբր թէ պայմանաւորում են ոնրի անխուսափելիութիւնը: Ոնրագործը իբր թէ ի ծ ն է ոնրագործ է: Նոյն բանաձեւի սակ դրեցին եւ արհայասպաններն ու ամեն տեսակ սերորիսները, բոլոր այսպէս անւանւած «խղաւակական յանցաւորները» (որոնց Լոմբրոզոն գուրգուրում էր միտ խանդավառութեամբ, բայց դա չէր արգելում, որ նա նրանց ընդունէր, որպէս անօրմալ ու սարկանոն էութիւններ...): Գործնական եզրակացութիւնն այն էր, որ, ըստ Լոմբրոզոյ, պէ՛տ էր ազատ կացուցանել յանցագործներին պասսիւսանտութիւնից... Իսկ դա յետաքրքում էր ամբողջ ժամանակակից իրաւագիտութիւնը: Ուժգին հակաանտութիւններ ու հարւածներ կրեց այդ նոր քերիան, քեւ նա հետզհետէ մեղմեց սկզբնական բանաձեւի յասութիւնը, ընդունելով նաեւ կենսական պասսիւսանտութիւնի, միջավայրի ազդեցութիւնները ոնրների յղացման ու զարգացման վրայ: Չր նայեամ բունն հակաանտութեան՝ այդ ինքնասիւք քերիան—մարդաբանական, ոնրագիտութիւնը—անագին հմայի՛ ու ազդեցութիւն վասակեց ժամանակակից իրաւաբանութեան սիստեմի վրայ:

ժողովրդական իրաւունքները, թաղելու ռամկավարութիւնը... Մի բուռն վարձկան զինւորների ուժը—այս կամ այն արկածախնդիր բռնաւորի ձեռքում—բաւական է երբեմն՝ այս կամ այն ժողովուրդը ոտնատակ անելու, ստրկացնելու:

Իսկ միւս կողմից, ժամանակակից մեծ պետութիւնների միլիտանտ կանգուն բանակները—ինչպէս արդէն տեսանք—նոյնպէս ոչ մի երաշխիք չեն ներկայացնում ժողովուրդների տեղական ազատութեան, կուլտուրայի ու առաջագիմութեան համար. ընդհակառակը՝ ենթարկւած լինելով իշխող դասակարգերի, երբեմն նոյնիսկ սահմանադրական միապետի հրամանատարութեան, այդ բանակները սոսկ գործիք են հարստահարութեան ու յափշտակման, նրանք պատրաստ են իրենց տէրերի հրամանի վրայ, հլու, անմոռնչ հնազանդութեամբ արշաւել ուրիշ ժողովուրդների դէմ, շղթայագրածել պատերազմների սարսափները, մղել երկիրը դէպի կործանում, նետել նոյնիսկ հարազատ անգէն ժողովրդի վրայ՝ նրան «զսպելու», «խաղաղացնելու» նպատակով... «Կանգուն բանակների» սիստեմի մէջ ազգաբնակչութեան ահագին մեծամասնութիւնը մտնում է դարձեալ անգէն, անատամ, մերկապարանոց և ազատագրական տագնապների մէջ—անուժ ու անօգնական...

Համաժողովրդական բանակն է միակ փրկութեան խօրիսխը: Զինւած ու մարզւած ժողովուրդն է միայն, որ կարող է ընդմիշտ ապահովել իր ազատութիւնը, թուրք կանգնելով բռնակալական և ամեն տեսակ յետադիմական դաւերի հանդէպ: Երբ ամբողջ ժողովուրդը, նրա բոլոր առնական ուժերը գիտեն զէնքի գործածութեան եղանակները, գիտեն կրուելու լաւագոյն արւեստը,—ոչ մի միապետ կամ կամայական, ոչ մի զինւորական կամ աւատական ուժ, ոչ մի բռնաւոր, հակաժողովրդական կաստ ու դասակարգ չի կարող յարատեւել իր տիրապետութիւնը, անգամ միլիտանտ վարձկան ու այլ զինւորների աջակցութեամբ:

Այս պարզ, զգաստ տրամաբանութեամբ է, որ ազատ Հելվեցիայի փոքրիկ ժողովուրդը հիմնել է իր սիրուն հայրենիքում «ազգային բանակի» (*milice nationale*) ուժեղ ու համակրելի սիստեմը:

Թերութիւններ ունի, ի հարկէ, և այդ սիստեմը, բայց Հվէյցարիան, յամենայն դէպս, ամենից աւելի մօտիկ է կանգնած այն իդէալական վիճակին, որ անւանում ենք համաժողովրդական զինւորութիւն կամ թէ սպառնազէն ռամկավարութիւն:

Նկարագրենք ընդհանուր դժերով շվէյցարական այդ սիստեմը:

Նրա ամենաէական գիծն այն է՝ որ իւրաքանչիւր քաղաքացի զինւոր է, առանց դադրելու քաղաքացի լինելուց: Բոլոր շվէյցարացիք զինւոր են և սակայն ոչ մէկը նրանցից չի խլուում իր քաղաքացիական անհրաժեշտ պարտաւորութիւններից:

Չը կայ զինւորական կաստ, դասակարգ. չը կան արհեստով զինւորներ: Չը կայ նպատակ՝ կառուցանելու զինւորական բարդ, հոյակապ մարմիններ: Նպատակն է կրթել դաստիարակել և կազմակերպել բոլոր առողջ շվէյցարական քաղաքացիներին այնպէս, որ վտանգի

Ժամին նրանք կարողանան հանդէս բերել կուռ, ներգաշնակ ու արագաշարժ մի բանակ—ոչ թէ նւաճողական արշաւանքներ նիւթելու, այլ միայն իրենց թանկագին հայրենիքը պաշտպանելու...

Չը կայ հելվետեան սիստեմի մէջ միլիտարիզմի ջախջախիչ բնուր, չը կայ երկարատև, մաշող, հոգեհասն ծառայութիւնը, չը կայ այն անդունդը, որ բաժանում է մեծ պետութիւնների մէջ զինւորական բարձրագոյն աստիճանաւորներին իրենց ստորադրեալ զինւորներից, չը կան այն անվերջ ու տաղտկալի կազմային մարզանքները, որոնք բխանում ու ստրկացնում են զինւորին, դարձնում նրան անխօս գործիք, հլու աւտոմատ և գաժան, աւերիչ մի ուժ... Շվեյցարիան ազատ է միլիտարիզմի ամենախոշոր չարիքներից:

Սահմանադրութեան 18-րդ յօդուածի թելադրութեամբ՝ իւրաքանչիւր ողջանդամ (valide) քաղաքացի պարտաւոր է բնական տարեկան հասակից սկսած, կատարել զինւորական ծառայութիւն: Այդ պարտաւորութիւնը բացարձակ է, նա չի ընդունում որևէ զիջում, արտօնութիւն յօգուտ այս կամ այն անհատի կամ ընտանիքի: Միևնոյն գերդաստանի բոլոր եղբայրները պարտաւոր են ծառայութեան գնալ: Օրէնքին ենթարկւում են անգամ նրանք, որոնք ընտանիքի պահպանող, կերակրողն են:

Բոլոր նրանք, որոնք շվեյցարական հայրենիքից դուրս գտնւելով կամ թէ նրա հողի վրայ այս կամ այն պատճառով չեն ենթարկւում զինւորական ծառայութեան, պարտաւոր են վճարել տարեկան որոշ տուրք: Տուրքից ազատւում են այն չբաւորները, որոնք ֆիզիկական կամ հոգեկան որևէ հիւանդութեան պատճառով չեն կարողանում կերակրել իրենց ընտանիքները:

Զինւորական ուժերը Շվեյցարիայում բաժանւում են երեք կարգի.

1. Իսկական կամ գործօն զօրք (Elite), կազմւած 20-ից մինչև 32 տարիք ունեցող բոլոր քաղաքացիներից:
2. Լանդվեներ (Landwehr) կամ առաջին պահեստի բանակ. այդտեղ մտնում են 32-ից մինչև 40 տարի ունեցող քաղաքացիները:
3. Լանդշտուրմ (Landsturm) — երկրորդ պահեստի բանակ. այդտեղ մտնում են 41-ից մինչև 48 տարեկանները \*):

Լանդշտուրմի մէջ մտնում են նաև այն զինւորականները, որոնք ժամանակի ընթացքում դառնում են անընդունակ առաջին երկու զօրակարգերի ծառայութեան համար: Մտնում են, վերջապէս, նոյն լանդշտուրմի մէջ կամ աւտօմատ 20 տարեկանից պակաս և 48-ից աւելի, որոնք ունին բաւականաչափ ֆիզիկական և զինւորական ընդունակութիւններ:

Շվեյցարացի համարում է այդպիսով զինւորական ծառայութեան մէջ, իր 20 տարեկան հասակից մինչև 48-ը: Զօրահաւաքը կատարւում է իւրաքանչիւր տարւայ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներում: Նօրակոչները, ըստ իրենց ընդունակութիւնների, դասաւորւում են այս կամ այն դպրոցում, ուր մնում են 45-ից մինչև

\*) Les instructions relatives au service de la Confédération suisse, „Organisation militaire de la Confédération Suisse“, 1907.

80 օր, նայեա՛ծ զինւորական արհեստի ճիւղին: Պահանջւում է՝

45 օրւայ վարժութիւն	հետևակազօրքի համար
80 " "	հեծելազօրքի " "
55 " "	թնդանօթաձիգի " "
50 " "	զինւոր. ճարտարագէտների (Genie)
46 " "	սանիտարների (առողջապահիկ) զօրքի համար:

Չը կայ, ուրեմն, մշտնջենաւոր, պրօֆէսիօնալ, կանգուն բանակ, զատւած ընդհանուր հասարակական կենսից. կայ համազգային, համաժողովրդական մի զօրք, որ տարածւում է անխտիր բոլոր քաղաքացիների վրայ և որի հատուած-միաւորները ունին միայն ժամանակաւոր մի գոյութիւն: Քաղաքացիները այս կամ այն ճիւղի մէջ որոշ ժամանակ ծառայելուց, որոշ անհրաժեշտ մարզանքները կատարելուց յետոյ՝ վերադառնում է իր օճախը, նւիրւում է կրկին իր քաղաքացիական աշխատանքին, պարտաւորւելով յետագայում՝ վերստին երևան գալ պարբերաբար, բարձր իշխանութեան հրահրով, այդ մարզանքների կարճատև կրկնողութեան համար (les répétitions):

Բարձր գործադիր իշխանութիւնը՝ զինւորական պաշտօնատունն է (département militaire),— համաշվեյցարական սպայակոյտը, որի անդամները նշանակւում են դաշնակցական բարձրագոյն կառավարութիւնից, և որի գլխաւորն ընտրւում է 3 տարի ժամանակով: Պատերազմի միջոցին այդ վերջինը ստանձնում է գեներալի, ընդհանուր հրամանատարի պաշտօն: Կրթւած, մարզւած բարձր սպաների այդ մարմինը և հսկում է զինւորական ընդհանուր կարգապահութեան վրայ, որը առհասարակ օրինակելի է Շվեյցարիայում. նա կազմակերպում ու գործադրում է զինւորական արգարագատութիւնը, սահմանում է պատիժներ այլևայլ զանցառուների համար: Զանցառութեան, դասալքութեան օրինակներ առհասարակ շատ քիչ են լինում այդ երկրի մէջ, իւրաքանչիւր քաղաքացի սողորած լինելով այն գիտակցութեամբ՝ որ զինւորի պաշտօնն այդտեղ ամենատուրքն է բոլոր պաշտօններից, որ նրա կրած դրօշը խորհրդանշանն է շվեյցարական հայրենիքի — երկրագնդի ամենաբախտաւոր հայրենիքի — պաշտպանութեան ու անբռնաբարելիութեան...

\*

Որքան համեմատաբար կարճատև է զինւորական կրթութիւնը... Բայց և որքան հրահանգիչ է նա, արգասաւոր՝ պատերազմական, բարոյական, քաղաքացիական տեսակէտից: Ո՛ւր են երկար տարիների միօրինակ, սպանիչ մարզանքները, որոնք ընդունում են մեծ պետութիւնների միլիտարական սիստեմները...

Տարիներն այստեղ փոխարինւած են ամիսներով ու շաբաթներով, բայց այդ ամիսների ու շաբաթների մէջ իւրաքանչիւր ժամը օգտագործւած է ամբողջապէս ու ամենայն ինամքով, ժամանակի և աշխատանքի ոչ մի հիւլէ չի կորչում այդ կարճատև մարզանքների մէջ: Զինւորական արւեստն ուսուցանւում է հանգամանօրէն, իր բոլոր մանրամասներով. առաջին րեկրուտական դպրոցից յետոյ՝ պարբերաբար նորէն

զէնքի կոչելով, երիտասարդ զինւորը այդ կարճաւակ կրկնութիւնների ընթացքում թարմացնում է իր յիշողութեան մէջ անցեալ փորձերը, կատարելագործում է իր զինւորական ծանօթութիւնները, աւելի տոգորւում իր պաշտօնի գիտակցութեամբ, աւելի վառւում հայրենասիրական իր կոչումով... Նա նոյնքան ճարպիկ, նոյնքան մարզաձի, նոյնքան հնարագէտ է, որքան և մեծ պետութիւնների զինւորները, որոնց «մշակում են» ամբողջ տարիներ զօրանոցների տանջարաններում...

Չինւորական կրթութիւնը Շվեյցարիայում կազմում է ընդհանուր կրթական սիստեմի հետ մի գեղեցիկ համագործութիւն, մի սենթեզ, որ, կարելի է ասել, յատուկ է միայն այդ երկրին: Չինւորի արհեստը, մարզանքները, զինավարժութիւնը սկսւում են ոչ թէ 20 տարեկանից, այլ շատ առաջ—պատանիների, մանուկների մօտ:

Պատմական խոր պատճառներ ունի այդ հրապուրիչ երևոյթը: Շվեյցարիան մէկն է այն երկրներից—«փորրիկ ու մեծ», կուլտուրական երկրներից—որոնք դարերով կրել են իրենց կաշւի վրայ բռնապետական լախտի հարւածները և որոնք—մղած գոյութեան կուրի անագորոյն պահանջներից—վաղուց իւրացրել են ըմբոստ կեանքի բոլոր առնական պատերազմները, զարգացրել են իրենց ծոցում դիմադրութեան, ինքնապաշտպանութեան հզօր բնագործ, զարգացրել են այն բոլոր յատկութիւնները, որոնցով պէտք է զինւորի ճակատագրաբար գայլերով ու բորենիներով շրջապատւած ամեն մի համայնք, եթէ չի ուզում այլասեռուել ու անդունդ գնալ...

Չինւորական ձիրքը պատմականօրէն, ժառանգականօրէն անցել է շվեյցարական սերունդներին

և այսօր, կարելի է ասել, վիշելում Տէլի փոքրիկ, հպարտ հայրենիքը մի կատարեալ մարդարան է, ուր անգամ մանուկները, ապագայ զինւոր-քաղաքացիները, իւրացնում են արդէն ռազմական արեւստի անհրաժեշտ հիմունքները, պարսպում են մարմնամարզութեամբ, վարժւում են հրացանաձգութեան, դարձնում են այն մի տեսակ գերագոյն զարճալիք\*):

(Վերջը յաջորդ անգամ)

\*) Ձեռք կարող չը յիշել այստեղ մի ռուսագրաւ խօսակցութիւն, ու տեղի է ունեցել 1896 թին Շվեյցարական Հանրապետութեան Նախագահի եւ անցի. լօրջ Սօլսբիւրիի միջեւ—մեր, հայկական խնդրի առթիւ: 1896-ին, մեծ ջարդերից յետոյ, ինչպէս այստեղ է, Շվեյցարիան միակ երկիրն էր, որ ծայրէ ծայր բռնւած բողոքի ու ցասման միջինցներով, վնասեց պատճառով հանգամանք սալ այդ բողոքին եւ համազգային մի պատճառաւորութիւն ուղղելով Բերն, դաշնակցական բարձրագոյն կառավարութեան մօտ, թիւարեց վերջինից՝ հաղորդել իր ցասումը համարեան գազաւորութիւնների համար պատասխանատու պետութիւններին:

Կառավարութիւնը լինելով այդ երկրում ժողովրդի սպասաւորը, առանց վարանման համակերպեց ընդունւած որոշումին եւ Նախագահը զնաց անձամբ կատարելու մեծ պետութիւնների ներկայացուցիչների մօտ իր ծանր առաւելութիւնը: Եւ երբ Լօնդօնում «փոքրիկ-մեծ» Հելվեցիայի պատճառով ներկայացուցիչը լօրջ Սօլսբիւրիի (այն ատեն «յրեմիէր») սիրալիք հիւրընկալութեան մէջ, նախ սեղանի շուրջը պատմում է հայ ժողովրդի մարտիրոսութիւնը, հայցելով իր երկրի անուցից կարողի միջամտութիւն—ազնիւ լօրդը, որ իր ծնունդ որովամտութիւնը մեղմելու համար հրապարակ էր նետել ծափօր ժրգր «բիսանական նաւատուրի եւ սաւրուսան՝ զագարներին» մասին—խորհուստ կերպով ու կիսակասակ մննչում է Շվեյցարիայի Նախագահին:

—Ա՛հ, պարոն նախագահ, թէ որ հայերն էլ ձեր բաջարի հայրենակիցների պէս հրացան բռնել գիտեանային... այդ ջարդերը չէին առաջանալ...

Որքան հեզմանք այս պատմական յայտարարութեան մէջ եւ որքան բռնակից նամարտութիւն...

Ե Ղ Ի Շ Է Թ Ո Փ Ձ Ե Ա Ն

«Թոփչեանն սպանւած է Բաբերդի մօտ»...  
Ահա ցաւազին անակնկալը, որ ստանում ենք վերջին պահուն լակօնական մի հեռագրով Կ. Պօլսից: Մանրամասներ չը կան... Անորոշութիւնը կրկնապատկում է մեր կսկիծը: Ո՞վ նիւթեց այդ անանուն ոճիրը... Ո՞ր չարագործ ձեռքը բարձրացաւ այդ ժիր, բեղուն և շխտակ գործիչի վրայ: Ո՞ւմ շահն էր պահանջում ոչնչացնել գրչի այդ ազնիւ աշխատաւորին: Աւազակային յարձակում: Թշնամու սադրա՞նք: Թէ՞ դ ա ա ա ճ ա ն ու թ է ա ն մի վատ հարւած, մի քստմնեղի յղացում...

Այդ վերջինը մեզ չի զարմացնի: Թոփչեան Հ. Յ. Գառնակցութեան ամենամանձուէր առաջամարտիկներից էր, նրա սկզբունքների քաջ ախոյեանը, նրա դրօշակի խանդավառ կրողը... Մեզ չի զարմացնի, ո՛չ, եթէ հայկական դաւամուղ ուղին—նոյնիսկ վերածնութեան այս խորհրդաւոր ու հանդիսաւոր օրերում—դայ վրէժ լուծելու իր չը հանդուրժած կազմակերպութիւնից: Մեզ չի զարմացնի, եթէ հակադաշնակցական ունեցնելով յափրացած այսօրւան մթնոլորտում—ուր, Թիֆլիսից մինչև Պօլս միացել են մի չարագործ ներդաշնակութեան մէջ հայ ցեղի բոլոր ուսեալ և անուս տականքները—մեզ չի զարմացնի, եթէ մի այդպիսի մթնոլորտում ծաղիկն ամենատարբի, հայրենադաւ ոճիրները, ուղղւած մի կազմակերպութեան դէմ, որ քաղաքական վերածնութեան կուսան է եղել հայրենիքի բոլոր երեք հատուածներում, որ իր անաղարտ բարձրութիւնից արհամարհել է միշտ հակառակորդ փոճակների հարւածները, արորել է իր գարշապարի տակ նրանց շահակնդիր զրպարտութիւններն ու անարդանքները:

Սպասենք: Առայժմ մերկ, արտասուելի իրողութիւնը տնկւած է մեր առջև—Թ ո փ չ է ա ն ն ո ս պ ա ն ւ ա ծ է—մեր թանկագին ուժերից մինը, մեր լաւագոյն յոյսերից մինը...

Յարական որոգայթներից ազատւելով, նա անցաւ «Երկիր»—այն «Երկիրը», որ դարձել է խորհրդանշան բոլոր վսեմ բողոքների, որ նա ինքը գործողութիւն էր շատերի պէս պատանեկան հասակից, դնաց ու լծւեց նրա մատաղ առաջադիմութեան անիւին, իր խանդավառ սրտի և իր անխնայ կրողի բոլոր թափով... Բայց ազատ Հայաստանի մէջ գտնւելան ի՞ժեք՝ աւելի թունոտ ու մահաւիթ, քան ցարական մագիլները...

Թո՛ղ այդ հեղ ու անբիծ մարդու եղեռնական մահը ցասման փութորիկ հանէ մեր զազրելի բարբերի դէմ, ուր հարւածւած է առաքինութիւնը և խրախուսւած սեւ, դրուժան հակառակորդութիւնը...